Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

221

8
U-55

2011

2003

2666
Ց
Ս-55
Публичная библиотека
1922
Мясникяна

# ՄԻՔԻՐ

## ԹՇՆԱՄԻՆԵՐԻՑ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ.

Թարգմանեց

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՐԶԱԲԵԳԵԱՆՑ։

Երկրորդ տպագրութիւն

ԲԱԳՈՒ.

Հայոց Մարդասիրական ընկերութեան տպարանումը։

1873

Գրաշար Միխայէլ Ազնաւորեանց։

ՆՈՒԻՐՈՒՄՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ

Աղջկանց և տղաներին

ԹԱՐԳՄԱՆՈՂԸ։

1001
2833

63

Дозволено цензурою. Тифлисъ. 28 мая 1873 года.



# ՅԱՌԱՋԱԲԱՆ․

Ո՛վ և իցէ, եթէ գիտէ, եթէ սովորած է փոքր 'ի շատէ բարերարութիւն անել իւր դրացիներին, սիրել իւր թշնամիներին և ներել նոցա չարութեանը, կարդալով այս փոքրիկ պատմութիւնը, որից ծնանում է բարոյական գաղափար, կ'աւելացնէ և ունեցածի վերայ:

Եւ որովհետև աշխարհի մարդկանց բաց 'ի զանազան արհեստագիտութիւններից անշուշտ հարկաւոր է 'ի խաղաղութիւն և 'ի շինութիւն աշխարհի մի առաջին և անմիջական ուսում եւ այն է բարոյականութիւն, որի մէջ պարունակվում են առաքինական շատ մասերից և՛ կատարեալ սէր և՛ համբերութիւն. ուստի մտադիր եղէ թարգմանել 1868 թուականի վերջում այս գրքոյկը, որի բարոյականի վերաբերմամբ արժանաւորութիւնը գովելու՝ թողնումեմ խրատասէր ընթերցողին:

Իմ այդ թարգմանութիւնը 1869 թուականում ընդունելութիւն է գտել „Մեղու Հայաստանի" լրագրի միջոցաւ և առանձին գրքոյկ տպագրուելով: Բայց որովհետև առաջին տպագրութիւնը, որ փոքր 'ի շատէ անյարմարութիւն ունէր և արդէն վերջացածի պէս է; ուստի 'ի նկատի ունենալով այս ամենը ցանկացայ սորա երկրորդ տպագրութեանը աւելի յարմարաւէս

տուաջվանից, հեշտացնելով ոճի և նախադասութիւնների մէջ գտնուած քանի մի ծանր կողմերը, և շատ տեղերում բառերի պարզ նշանակութիւնը փակագծի մէջ աւելացնելով, որ աւելի դիւրըմբռնելի լինի ամենի համար:

Եւ եթէ ընթերցողը գտնէ այդ թարգմանութեան մէջ և՛ս գրաբառ բառեր գործ դրած, այն նպատակի համար է, որ ամենայն երկրում, ամենայն հայի համար հասկանալի լինէր կարդացածը, որովհետև մի երկրում ընդունված և գործածական շատ աշխարհաբառ բառեր կարող էին անհասկանալի լինել և ուրիշ երկիրներում, ինչպէս օրինակի համար Տաճկաստանի հայերինը Ռուսաստանում, Ռուսաստանի հայերինը Պարսկաստանում և Տաճկաստանում.

Յովհաննէս Միրզաբէգեանց:




ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

## Սկայագիրներ.

Մէկ գեղեցիկ ամառվայ իրիկուն՝ արեգակի վերջին ճառագայթները զարդարում էին ծիրանի և ոսկեայ գոյնով լճի հանդարտ մակերևոյթը (երեսը), որ խաղաղ էր մինչև ջրի ափերը: Թէ և երբեմն մեղմիկ քամին վրդովում էր նորա խաղաղութիւնը, որ փայլում էր, բայց և շուտով կրկին հաւասարվում հարթանում էր ինչպէս հայելու նշանակն տաք

էր և ցուրեկան տաքութիւնն անցնում էր և նորան փոխարինվում զարմանալի հովութիւն, որով և սկսում էին շարժվիլ ծառերի տերևները: Լճի ափերումը տեսնվում էին թանձր կանաչ անտառներ, միայն մէջ տեղում բաժանված անտառից երևում էին գեղեցիկ ու սպիտակ փոքրիկ տներ, որոնք պարզապէս զանազանվում էին մութ կանաչից: Հենց նոյն անտառումը կար մէկ շինութիւն, որ աւելի մեծ ու աւելի բարձր էր միւսերից, որ և շրջապատած էր մշակված և խնամք տարված մրգեղէնների ընդարձակ այգիով: Երևում էր, որ այն տան տէր մարդիկը աղքատ չէին, այլ աշխատասէր և հոգացող: Արեգական ճառագայթները երևում էին այն տան փայլուն և մաքուր լուսամուտների վերայ, որոնք ներսից էլ նմանապէս գեղեցիկ էին և յարմար ինչպէս դրսիցը: Այդ ծաղկափթիթ կալուածը (մուլքը) պատկանում էր մէկ եօթանասուն տարեկան ծեր մարդի, որ դեռ առողջ էր



և զուարթ: Նա իւր ամէն թէ մատաղ (ջահիլ) և թէ հասուն հասակը անցուցել էր անդադար գործունէութեամբ, և այժմ կարող էր հանգստանալ ծերութեան ժամանակ հանդիստ խղճմտանքով, որովհետև իւր տարիները առանց մի օգտի չէին անցել:

Ծերի անունն էր Մարկ Բշտրեկեր: Նա դուրս էր եկել պատշգամբի (բալկոնի) վերայ երեկոյեան մաքուր ու հով օդ ծծելու, սիրով նայելու դէպի հանդարտ լիճը, դէպի հեռի սարերը և դէպի անտառը: Գործերը վերջացել էին, հանգստութեան ժամերը հասել, դաշտերից էլ դարձել էին միասին անցուցանելու օրվայ մնացորդը. մեծ տան պատշգամբի վերայ էլ դուրս էր եկել ծեր Մարկի որդին՝ Ավգուստինը և իւր կինը վեց գեղեցիկ երեխայքով, որոնք յարգելով իրանց պապին՝ շրջապատել էին նորան: Նա փայփայեց ամենին և սիրով հարցրեց, թէ ինչ են արել նոքա, շատ են գործել թէ

ո՛չ, և նոցա ուրախ շատախօսութիւնը պարապեցրեց ծերին ուրախացնելով:

— Ինչպիսի՜ զարմանալի երեկոյ է, աղաղակեց տասներեք տարեկան Իւլեան, որ կանգնած էր պապի մօտ,—և ինչպիսի՜ գեղեցիկ տեղ է, ես հաւատում եմ, որ աշխարհքումը չկայ այսպիսի գեղեցիկ երկիր, ճշմարի՞տ չէ արդեօք իմ պապ:

Ծերը ժպտալով (քմծիծաղ տալով) շփեց (սղալեց) երեխայի շիկագոյն գլուխը և ասաց.—Եւրոպան մեծ է, և նրանում կան շատ գեղեցիկ տեղեր, բայց նա դեռ ևս մեծ մասը չէ աշխարհի: Ամերիկան աւելի մեծ ու կենդանագրական չէ ուրիշ աշխարհներից:

— Ամերիկան մենք ճանաչում ենք, աղաղակեց Իւլեան, սա է, մեր հայրենի՛քն է, մենք ծնուել ենք այստեղ:

— Այո՛, սա է, բայց այստեղ չէ ծնուել իմ հայրը՝ Ձեր մեծ պապը, որը վաղուց հանգչում է գերեզմանում:

— Ինչո՞ւ համար է եկել նա Ամերիկա,



հարցրեց Մարկի միւս թոռն.—Ինչո՞ւ է թողել հայրենիքը, որտեղ հենց ճշմարիտ լաւ է:

— Մենք ամենքս էլ կերթանք, որտեղ մեզ ցոյց կտայ ճակատագիրը, իմ պապն էլ նմանապէս չէր ցանկացել թողնել Գերմանեան, բայց հանգամանքն այդպէս վճռեց: Նորա կեանքը կարող է օրինակ լինել այլոց համար: Նորանում կային շատ անսովոր և խրատական բաներ:

— Պատմի՛ր մեզ ինչ որ գիտես քո հօր մասին, սիրելի՛ պապ. աղաղակեցին բոլոր երեխաները միասին խիստ մօտենալով դէպի ծերը:

Ծերը չմերժեց կատարելու թոռների ցանկութիւնը, իմանալով, որ երեխաները աւելի հեշտ կ'սովորին խօսակցութեններից կամ պատմելուց քան գրքից: Նա նստաւ աւելի յարմար. երեխաներն էլ պատրաստվեցան ուշադրութեամբ լսելու:

Պապը սկսաւ այսպէս.—Ութսուն տարի առաջ Գերմանիացւոց մի փոքրիկ քա-

ղաքում բնակվում էր մէկ հարուստ վաճառական մարդ Բ․շարեկեր անունով, որին շատ յարգում էին ո՛չ թէ նորա հարստութեան պատճառով, այլ նորա բարութեան համար, որ միշտ պատրաստ էր ամենքին ծառայելու։ Նա ապրում էր սիրով և հանգարտ և բախտաւորապէս իւր կնոջ, իւր մէկ որդու և երեք աղջկանց հետ։ Որդու անունն էր Էվգուստին, ինչպէս Ձեր հօր անունը, նա ազնիւ երեխայ էր։ Դեռ երեխայութեան ժամանակը նա գերազանց էր իւր փութաջանութեամբ և ուշադրութեամբը. մեծանալով ուրախացնում էր հօրը և զարմացնում ուսուցիչներին իւր յառաջադիմութեամբը։ Ամենքը գովում էին Էվգուստինի ընդունակութիւնը, և խորհուրդ էին տալիս հօրը, որ նրան վաճառական չշինէ, այլ ուղարկէ համալսարան, ուր նա կարող էր երևելի ուսեալ լինել։ Իրաւի, Էվգուստինին շատ ցանկալի էր ուսումն. նա ուրախացաւ, երբ յայտնեցին նրան,



թէ պէտքէ սովորի գիտութիւն և պէտքէ առնեն նորա համար շատ գրեանք և ուղարկեն համալսարան։

Էվգուստինը ունէր առանձին սէր և ձգտումն դէպի բժշկականութիւնը. նորա հայրն էլ նմանապէս յարգում էր այդ արհեստը, որ փրկում է մարդկանց չարչարանքից։ Մայրը կարծում էր, որ իւր որդին երևելի բժիշկ կլինի, այնպէս, որ ամենքն կդառնան դէպի նա օգնութիւն խնդրելու համար, և կօրհնեն նրան, ինքն էլ կլինի կատարեալ բախտաւոր։ Այս ամեն յոյսերը այն նորահաս տղայի համար, որ նստած էր գիրքը ձեռին, պէտքէ փոշի (թոզ) դառնային, որովհետև նրան սպասում էր ամենևին մի ուրիշ վիճակ։

Էվգուստինը մինչդեռ աշխատում էր վերջացնել բժշկականութեան ընթացքը համալսարաններից մէկի մէջ, ահա՛ յանկարծ ստացաւ իրանց տունից մի լուր, որ տրտմեցրեց նրան։ Սուրհանդակը բերաւ նորա փոքրիկ սենեակը մէկ սև կնքով ծրար

(փակէթ) . . . . . Նորա ձեռները դողացին, երբ բացեց կնիքը (փեչատը), աչքերը մըթնացան արտասուքով: Այն մի քանի տող նամակը իւր մայրն էր գրել, այսպէս.

„իմ սիրելի՛ որդի, շո՛ւտ արի, ե՛կ, քո հայրը տնանկացաւ, նրան խաբեց իւր բարեկամներից մէկը, որին նա յանձնել էր իւր բոլոր կարողութիւնը: Նա չկարողացաւ տանել այդ դիպուածին, մեռաւ խեղճը: Տէրը բարկացել է մեր վերայ, մենք ի՞նչպէս տանենք այդ տարաբախտութեանը:“

Խեղճ Էվգուստինը չմտածեց երկար և չմատնեց իրան յուսահատութեան. նա հաւաքեց շուտով իւր կայքը և ճանապարհ ընկաւ դէպ'ի տուն: Ախ ինչպէս տրտմալի էր արդէն ամեն բան այդ տան մէջ, որ թողել էր ուրախութեամբ: Քոյրերը եղբօր առաջ դուրս եկան արտասուք թափելով, պառաւ մայրը այնպէս էր հառաչում, որ չկարողացաւ մի խօսք հանել բերանից, որովհետև խիստ տրտմութեամբ շփոթված էր նա: Նորահաս ստուդենտը գրկեց համբուրեց իւր ազգականներին. բայց երբ մտածում էր իւր հօր



վերայ, որին շատ սիրում էր և արդէն չէր տեսնում, ուստի չէր կարողանում զսպել իւր սաստիկ հառաչանքը և արտասուքը:

Այնուհետև Էվգուստինը պէտք է պարապվէր մի այնպիսի գործով, որ լաւ թէ վատ կարողանար կառավարել իւր այրիացած մօրը և քոյրերին: Տրտմութենից մի փոքր ուշարերված Էվգուստինը սկսաւ քննել հօր թղթերը և գրքերը, և համոզվեցաւ, որ ամենը ոչնչացրած է:

Այն բարեկամը, որին Մարդին-Բշարեկերը յանձնել էր իւր ամեն կարողութիւնը, անգութ աւազակի գործ է կատարել, նա թագնուել է գեշերը մէկ ծածուկ տեղում և հաւաքել է Էվգուստինի հօր բոլոր փողերը և փախել: Նրան երկար ժամանակ որոնել են, բայց նա այնպէս է անյայտացել, որ անկարելի է եղել գտնելու անգամ նորա հետքը: Նա եղել է այդ վաճառական Մարդին-Բշարեկերի հին բարեկամը, որին շատ անգամ էր

յանձնել մեծ գումարներ, որ և դարձրել էր ճշմարտութեամբ։ Նրանից չէր խնայել ծերը համարեա իւր կարողութեան մէկ մասը, բայց նա բոլորն է կամեցել յափշտակել, ուստի սպասել է նա այնքան, որ Բշարեկերը հաւատ ընծայէ և տայ նորան իւր բոլոր դրամագլուխը մի ինչպէս և լցէ հարկաւոր գործառնութեան համար։ Փոխանակ օգուտ տալու, այդ աւազակը թողել է այդ բարի և հաւատարիմ մարդի համար նորա մեծ կարողութենից միայն մի մանաւոր գումար։ Մարգլինի համար մեծ ցաւ մեծ հարուած եղաւ ո՛չ թէ միայն այնքան կարողութեան կորուստը, որքան այն մտածմունքը, որ էլ ինքն այնուհետև չէր կարող վաստակել նոր կարողութիւն և անհոգ պահել իւր ընտանիքը։ Ծերը հիւանդացաւ կարճ միջոցում ու մեռաւ. նա էլ չկարողացաւ յուսալ մարդկանց վերայ։

Եփրուսինէն յոյս ունէր, թէ այդ կորուստից ինչ և լինէ մնացած կլինի մի բան,



որով նոցա դրութիւնը այնպէս անյոյս չի մնալ, սակայն և այդ յոյսը 'ի զուր եղաւ։ Քննելով գործի հանգամանքը, տեսաւ որ ինքն է, Մնում՝ միայն իւր մօրը և նորահաս քոյրերի պաշտպանը, և այնուհետև պէտք էր աշխատել մի կտոր հացի համար, ուստի որքան որոնեց նա իւր հօր թղթերը, որքան վերաստուգեց հաշիւների մատեանները, ո՛չ մի տեղ էլ չերևեցաւ մի հետք, որ ծերը դրած լինէր ուր և լինէ մի գումար։ Նրան յաջողեցաւ միայն ժողովել փոքր ինչ հին պարտքերից, բայց այդ գումարով կարող էր կառավարել ընտանիքը ամենաչափաւոր տնտեսութեամբ միայն երկու տարի և ո՛չ աւելի։ Իւր ուսումն վերջացնելու համար էլ հոգացողութիւն չեղաւ. մայրը և քոյրերը պարտաւոր էին խնամել դորա վերջը, և թէպէտ այդ ցաւն էր Եփրուսինի համար, որ զրկւում էր ապագայ լուսաւոր ասպարիզից, բայց նա առանց տրտնջանաց հնազանդեցաւ իւր ճակատագրին։ Նորա

Ծեր մայրն էլ տրտմեցաւ նրանից աւելի։
— Իմ խղճո՛ւկ զաւակ. ասաց նա, սըրբելով իւր արտասուքը. — Քո վերջը ինչ կ՛լինի։ Ա՜խ, դու ինչպէս ջանասիրութեամբ կարդում էիր. ինչպէս քեզ գովում էին, և այժմ ամենը արդէն կորչում են, ամենը զուր եղաւ, էլ չե՛ս կարող վերջացնել ուսմանդ ընթացքը։

— Մխիթա՛ր կաց, մայրիկ, պատասխանեց նորահաս որդին արտաքուստ հաստատութեամբ, թէպէտ նորա սիրտը սաստիկ բաբախում էր (թակվում) ցաւից. — Ինչ որ սովորել եմ, այն չե՛մ մոռանալ, կարելի է, որ երբ և իցէ կ՚հարկաւորվի ինձ։ Անարժան տարաբախտութիւնը կ՚կազդուրէ (կուժովացնէ) ինձ և կ՛տայ կարողութիւն նոր ջանքի համար։ Ես նորահաս եմ և առողջ, մի՞թէ չեմ գտնել մի այնպիսի գործ, որով կարողանայինք կառավարվիլ ամենքըս էլ։ Ես չեմ պահանջում աւելի, ես կամենում եմ այնքան, որ դուք և քոյրերս չզգաք պակասութիւն։



Ավգուստինի բարեմիտ խօսքերը միամտացրին մի փոքր ողորմելի մօրը։ Նա յուսացաւ, որ շուտով իրանց գործը կարգի կ՚ընկնի, և ջերմեռանդութեամբ շնորհակալ եղաւ իրա որդուցը։ Ավգուստինը գնաց իւր հանգուցեալ հօր բարեկամների մօտ, և խնդրեց ամենքից իրա համար բարի խորհուրդ, թէ ի՞նչ անէ ինչո՞վ պարապվէ։ Բայց ո՛չ ոք բարեկամներից չ՚գտնուեցաւ նրան օգնական։ Նա որոնեց ուսուցչի կամ կառավարողի տեղ, սակայն մատաղ էր (ջահիլ) տակաւին և անհմուտ, ուստի չկամեցան յանձնել նորան դեռ ևս պաշտօն և առաջարկեցին սպասել։ Նա մի՞թէ կարող էր սպասել, երբ հարկաւորութիւնը ստիպում էր բախում էր նորա դուռը։ Վերջապէս նա մեծ ջանքով գտաւ մէկ չնչին գործ։ Նրան տալիս էին թղթեր պարզագրելու, և հատուցանում էին այնքան սակաւ վարձ, որ ամենևին բաւական չէր կառավարութեան համար. բայց նա ուրախ էր և [illegible]։

Մի անգամ, երեկոյեան նստած էր սեղանի վերայ, և գիր էր գրում. վերջացնելով գիրը, խոնարհեցրեց գլուխը: Սենեակում մոմի աղօտ (մթին) լոյսը լուսաւորում էր երիտասարդի բազմահոգ դէմքի դժգունութիւնը, որ կորցնում էր իւր պայծառութիւնը և զօրութիւնը շատ հոգսից աւելորդ կոպէկ ստանալու համար: Նուով գիտէ ինչ կսպասէր նրան ապագայում: Սակաւ դրամը, որ ժողովել էր, վերջացաւ, էլ նա չորանեց ո՛չ մի հաստատ պարապմունք, որով կարողանար անհոգանալ իւր ընտանիքը: Դժուար է ողորմելիներին գտնել մի կտոր հաց, մանաւանդ այն ժամանակ, երբ սպառնում է սովը: Այդ տեսակ մտքերը շուարացրին Էվգուստինին: Նա վեր կացաւ տեղից հանդարտ կերպով, որ չզարթեցնէ քնած մօրը, գնաց իւր հօր առանձնասենեակը, և նոր 'ի նորոյ սկսաւ պտտել անտեղի առևտուրական մատեանները (դաւթարները), որ գուցէ էլի գտնէ ինչպիսի ևիցէ մասա-



ցած ստանալիք: 'Իզուր նա վեր 'ի վերոյ արեց ճիշդ հաշիւները և համարները. ոչինչ չկարողացաւ գտնել նրանցում. բարկացած ու շփոթված դրաւ մատեանները պահարանի (շկաֆի) մէջ, որ էլ աւելի չերևէին իւր աչքին. բայց որովհետև մեծ մատեանները լաւ չէր տեսել և ստուգել, ուստի մնացեց ու խառնեց նրանց կրկին պահարանի մէջ. այդ ժամին յանկարծ լսուեցաւ մետաղեայ արկղի ձայն, որով Էվգուստինի սիրտը սկսաւ սաստիկ հարկանել: Նա գցեց մատեանը տախտակամածի (պօլի) վերայ, ձգեց ձեռը մինչև պահարանի պատը, շօշափեց այնտեղ մէկ մետաղեայ նիւթ, և շտապեց դուրս հանել նորան: Դա մի փոքրիկ արկղ (սնդուկ) էր, բանալին էլ իւր վերայ:

Սառն ու զարմացած կերպով բացեց արկղը, և նորա աչքերը յուսով օրոնում էին նրանում դրամ, սակայն նա սխալվեց: Ոսկու տեղ արկղումն կային թղթեր, մագաղաթ, և ուրիշ ոչինչ: Էվգուստինը

գրաւ այդ ամէնը սեղանի վերայ և սկսաւ խօսել ինքն իրան ծանր ժպտով։

— Միայն թղթեր են, դրանով ես չեմ կարող կառավարել մօրս և քոյրերիս։

Նա կամեցաւ արդէն դէն գցել այդ թղթերը մէկ անկիւնում՛ միասին արկղովը, սակայն հետաքրքրութիւնը թոյլ չտուեց նրան։ Նա տեսաւ, որ թղթերը գրված են Անգլիերէն, և որովհետև գիտէր այդ լեզուն, ուստի կամեցաւ կարդալ ինչ որ գրած էր։

— Ինչպէս են պատահել այդ Անգլիերէն թղթերը իմ հանգուցեալ հօրս, մտածեց նա,—ես չեմ լսել. որ նա երբ և իցէ գործ ունենար Անգլիացւոց հետ։ Դա տեսնուած չէ։

Նա որոշեց (ջոկեց) թղթերը, և սկսաւ կարդալ, սկզբումը անտարբերաբար, բայց յետոյ ուշադրութեամբ, և երբ վերջացրեց ամենասաստիկ հետաքրքրութենով, արիւնը շարժեցաւ դէպի նորա երեսը, աչքերը փայլեցան, նա դեռ նայում էր



7/XI - 1922

մագաղաթին, քանի որ կիսայրեաց մօմը չէր վերջացել, որ և շուտով [illegible] շիջաւ (անցաւ)։

— Ո՜հ, ինչպիսի՜ նեղութեամբ, ասաց Ավ-գուստինը,—հասայ մինչև այն հետաքրքրական տեղը, որ կտայ ողորմելի մօրս կարօտութենից ազատութեան յոյս, և մնացեալը չեմ կարող կարդալ, որոնեմ տեսնեմ արդեօք կգտնուի՞ խոհանոցումը (աշխանում) մէկ կտոր ինչպիսի և իցէ մոմ։

Նա զգուշութեամբ գնաց խոհանոցը, խարխափեց (տփտփեց) ձեռքով սեղանը և տախտակամածը, բայց ոչ մի տեղ չկարողացաւ գտնել այն, ինչ որ հարկաւոր էր իրան։

— Ուրեմն պէտք է մնալ մինչև առաւօտ, ասաց նա յոգւոց հանելով (թառաչ քաշելով), ընկնեմ քնելու։

Նա գնաց կրկին առանձնասենեակը, հաւաքեց այն մթին տեղում թղթերը և դրաւ արկղի մէջ ու բերաւ իր սենեակը։ Երկար ժամանակ անցաւ, չկարաց նա

քնելու մտածելով իրա գիւտի վերայ, և երբ ննջեց, անսովոր երազներ շփոթեցին նորան: Նա տեսաւ մէկ կախարդական երկիր պատած մեծ մեծ անտառներով, որոնց մէջ թափառում էին անսովոր անասուններ, թռչում էին գեղեցիկ թռչուններ ամենապայծառ ծաղկունքների վերայ: Նա զմայլութեամբ անցնում է այդ անտառները, որոց ճիւղերը հիւսած մէկ միւսի հետ բաղկացնում էին կանաչեայ թաղ, այնպէս, որ հազիւ թէ թափանցում էին միջով արեգական ճառագայթները: Վերջապէս նա դուրս է գալիս մէկ լայն դաշտ, որ ոռոգւում (ջրվում) էր մի պարզ գետով. փոքր ինչ հեռի երեւում էին սարեր, բնութիւնը երեւում էր վայրի և կախարդական:

Յետով Էդիսոնը սկսում է տեսնել, որ այդ կենդանագրական տեղումը թափառում են վայրենիք, ահարկու գազաններ, փայլուն աչքերով, սուր ժանիքներով (կեռիքներով) որոնք անհրեւելի կեր-



պով մօտենում են իրան: Այդ նորահաս մարդու սիրտը հարկանվում էր սոսկապէս, և գազանները յանկարծ աներեւութանում էին, ինքն յանկարծ երեւում է մէկ այգում (բաղի) մէջ, որը լիքն էր ծաղկունքներով և լուսաւորվածէր արեգական պայծառ ճառագայթներով, նորա միջով անցնում էր և մի պարզ ու պայծառ գետ, որի ափումը աւազի մէջ փայլում էին թանկագին քարեր: Գեղեցիկ թիթեռնակները թռչտում էին մէկ ծաղկից միւս ծաղկի վերայ. գեղեցիկ թռչնակները սրնթաց երեւում էին գեղեցիկ փետուրներով (թեփուռներով): Էդիսոնը փորձում է բռնելու մէկ թռչուն, ուստի ձեռը ձգելով դէպի ծաղիկը, որի վերայ նստած էր նա, հենց այդ րոպէին զարթնում է: Ամենեքին լոյս էր, և արեգակը լուսաւորել էր նորա սենեակը պայծառ ճառագայթներով:

— Դա ի՞նչ անսովոր երազ էր, ասաց նա շփելով իւր աչքերը և ինչի՞ց էր այս:

Ա՛խ, այո՛ դա երեկվայ թղթերն են, ուրեմն հարկաւոր է մինչև վերջը կարդալ նրանց։

Նա շուտով հագնուեցաւ. վեր առաւ երկաթեայ արկղը և շարունակեց կարդալ թղթերը. ուշադրութեամբ վերջացնելով վերջին թերթն՝ մտածեց նա, և ասաց ինքն իրան։

— Դա կարելի է թանկագին գիւտ լինի, եթէ ես խոհեմութեամբ օգուտ ստանամ դրանից. գնամ՝ ուրեմն խորհուրդ անեմ՝ մօրս հետ։

Թագցնելով զգուշութեամբ թղթերը, գնաց մօր մօտ, որ արդէն պարապվում էր տնային գործերով, և ասաց,

— Լսե՞լ էք, մայր իմ, որ իմ հայրս եղբայր է ունեցել։

— Ինչպէս չէ, նրան կոչում էին Գաբրիէլ. նա մատաղ հասակումը հեռացել է ազգականներից։ Քո հանգուցեալ հայրդ շատ անգամ է պատմել մեզ նորա մասին։ Նա մի անմահ երեխայ էր, անկախ



և արժանաւոր բնութիւնով. նա գնացել է Ամերիկա. մտել է այնտեղ զինուորական ծառայութիւն, նա երևելի է եղել պատերազմի (կռուի) մէջ Ամերիկայի անկախութեան համար, և եղել է օֆիցերների մէջ գործավար։ Նա այլ ևս չէ վերադարձել իւր հայրենիքը, մեռել է այն տեղ օտարութեան մէջ։ Տասն տարի դրանից առաջ բերին մեզ համար մէկ երկաթեայ արկղ, մէջը թղթերով լիքը, որը ուղարկել էր հանգուցեալ Գաբրիէլը։ Հայրդ գրել է նրան մէկ տեղ, չգիտեմ, յիրաւի մոռացել եմ։

— Ես գտել եմ երեկ այդ արկղը, մայր իմ, քննելով թղթերը նորանց մէջ գտել եմ մեր հօր եղբօր Գաբրիէլի օրագիրը։ Նորա վիճակը ամենևին տխուր չէ եղել։ Նա եղել է երևելի օֆիցեր, և ստացել է լաւ լաւ պարգևներ իւր ծառայութեան համար։ Թղթերի միջում կայ վկայագիր մագաղաթի վերայ Անգլիերէն գրած։ Ամերիկայում Անգլիացւոց նահանգի Նա-

հանգապետը (գուբերնատորը) շնորհել է իմ հօր եղբօր կապիտան Գ. Խորենին Բշտրեկելին յորդւոց յորդի մէկ երկիր, որ բաւական տեղ է։ Երկրի մէջ է և այդ կալուածի ցուցակաթուղթը, որը կարող է հաւատարմել Գուբերնիացւոց ընտիր դրսի (փաշայի) երկրին։ Այդ երկիրը այժմ պատկանում է մեզ, մայր իմ․ որովհետև մենք ժառանգ ենք մեր հօր եղբօրը, որ իր մահից առաջ գրել է օրինաւոր կտակ։ Դա մեծ բախտաւորութիւն է մեզ համար, մենք տիրապետող կլինենք մեծադիր կայքի։

Պառաւ մայրը շարժելով գլուխը ասաց. Եթէ այդ թղթերը ճշմարտապէս օգուտ կարողանային բերել մեզ համար, քո հայրը չէր դէն գցել դրանց. դու 'ի զուր կ'խաբես քեզ յուսով, սիրելի Աւգուստին։

— Ինչու չյուսանք, ասաց ոգևորված Աւգուստինը.— ես հասկանում եմ, որ հանգուցեալ հայրս չէ հասկացել, թէ ինչպիսի օգուտ է այդ ժառանգութիւնը.



եթէ իմանար, նա պէտք է թողնէր ամենը և գնար Ամերիկա, և այն տեղ հոգս անէր դորա մասին։ Բայց ճշմարիտը մեզ յայտնի է, որ ոչ ոք կարող չէ խլել մեզանից մեր հօր եղբօր ժառանգութիւնը։ Մեր հայրը իր գործերով այնպէս է պարապած եղել, որ չէ կարողացել հոգս անել դորա մասին. բայց ես, տեսնո՞ւմ ես, չեմ կարողանում գտնել մի այնպիսի պարապմունք, որ կարողանամ կերակրել Ձեզ և քոյրերիս։ Ես չ'պէտք է արհամարհեմ ոչ մի բան, որ լաւանայ Ձեր դրութիւնը։ Այս տեղ մենք հազիւ թէ ունենում ենք մի կտոր հաց, իսկ այն տեղ կլինենք տիրապետող գեղեցիկ ու պտղատու երկրի, որ կլինի մեր նոր հայրենիքը, և դու կանցուցանես պառաւութիւնդ բաւականութեամբ և բախտաւորութեամբ։ Ես շատ ցանկանում եմ այդ վիճակը քեզ համար ձեռք բերել։

— Դու սիրելի որդի ես, սիրով շարժված մայրը գրկեց որդուն, և ասաց.— Ես

արդէն բախտաւոր եմ դրանով, որ ու-
նիմ այդպիսի ազնիւ որդի. բայց ես կար-
ծում եմ 'ի վերայ այսր ամենայնի, որ քո
յոյսը զո՛ւր է։ Մտածի՛ր թէ որքան եր-
կիւղների, որքան արգելքների պէտք է
յաղթահարես, որ կատարվի քո դիտա-
ւորութիւնը։ Դու դեռ մատաղահաս ես,
ի՞նչպէս ես կարող մենակ գնալ այդպի-
սի հեռու տեղ վայրենի մարդկանց մօտ։
Դու եթէ ստանաս էլ այն երկիրը, որ
թողել է հօրեղբայրդ, կ'տեսնես, որ անա-
պատ է դարձել, որ և հարկաւոր է նոր
մշակել. մենք էլ չունինք հնարք կամ
միջոց և այնքան փող, որով դու պէտք է
գնաս հասնես այն տեղ։

— Բայց այս տեղ ապագաս ի՞նչ պէտ-
քէ լինի։ Ես չեմ աւարտել ուսմանս
ընթացքը. միայն կարող եմ խղճալի պար-
զագրող լինել, որով հազի՛ւ թէ կարո-
ղանում ենք մի կտոր հաց ձեռք բերել։
Ո՛չ, մի՛ արգելիր ինձ, մայր իմ, չպէտք է
կորցնեմ ժամանակը, և ինչո՞ւ համար



չփորձեմ։ Ինձ համար ծանր կլինի միայն
ձեզ թողնելը, բայց երկար ժամանակ
ձեզանից անջատված հեռացած չեմ մնալ.
մենք կրկին կ'միանանք։

— Ուրեմն հնարք և միջոց է հարկաւոր.
մենք ո՞րտեղից գտնենք դորան, սիրելի՛
Աւգուստին, դու դրան մօտ ճանապարհ
մի՛ կարծիր, դու ի՞նչո՞վ կերթաս այնտեղ,
ես և քո քոյրերը ինչո՞վ պէտք է ապրենք։
Ո՛չ, դու անկարելի բան ես մտածում։

— Ես կարգի կ'գցեմ ամենը, մայր իմ,
ահա՛ մեզ մնացել է այս տունը, սրան
կ'ծախենք։ Այդ գումարը բաւական է,
որով դուք կ'ապրէք երկու կամ երեք
տարի. իմ ճանապարհածախսի համար
քիչ փող է հարկաւոր։ Նիւ-Եօրքումը ես
հարուստ կլինիմ։ Ես դեռ չեմ ասել
քեզ, որ հօր եղբօրս թղթերի միջում
կայ և մէկ թանկագին վկայագիր։ Դա վկա-
յական է, որ մեր հօր եղբայր Դիտրեխը
դրել է այն տեղի բանկում երկու հազար

դօլէր, (*) և այս կտակել է նմանապէս հանգուցեալ Հայրս՝ ի ժառանգութիւն: Դու տեսնում ես, մայրիկ, այդ ներկայ հարստութիւնը, որանով մենք երկար ժամանակ կ՚կառավարվէինք: Ո՛չ թէ միայն ճանապարհորդութեանս կ՚հերիքանայ, այլ և կարող ենք կարգաւորել մեր պակասութիւնները մեր երկրում: Ցիրաւի, մայր իմ, այդ արկղը մեր ազատութիւնն է, և մենք չպէտք է դրան արհամարհենք: Ես կ՚կատարեմ ամենը, ինչ որ մտածել եմ մեր ապագայ կառավարութեան համար:

— Մտածի՛ր, իմ որդի, տե՛ս թէ ինչպիսի՜ երկար և երկիւղալի ճանապարհորդութիւն է կանգնած առաջիդ: Ես մէկ բոպէ հանգիստ չեմ լինելու, իմանալով, որ կարող է պատահել նաւաբեկութիւն, փոթորիկ . . . . . որ իմ որդիս արդեօք կընկղմուի՜ . . . . . . :

— Ուրեմն նոքա ամենները, որոնք ուղե-

(*) Դօլլէր, արծաթեայ մանէթ է, որ մեզանում արժէ 1 ռուբ. 35 կոպէկ. ծան. Թարգմ.



ւում են դէպի Ամերիկա, ջրի մէջ ընկղմվո՞ւմ են ու մեռնում: Միամի՛տ կաց, մայր իմ, և յուսացի՛ր, ամենը կըուղղուի դէպի լաւը:

Այդ նորահաս տղայի հաստատամտութիւնը մի փոքր հանգստացրին մօրը: Նա վառված գրկեց (խըղըտեց) իւր որդուն և ասաց արտասուքով:

— Այո, բախտաւորութիւնը չի թողնիլ այսպիսի ազնիւ և գովանի որդուս: Գնա իմ որդի, ես հանգիստ կսպասեմ քո վերադարձին:

Նոր կարողութիւնով սկսաւ նորահաս մարդը մտածել իւր դիտաւորութեան վերայ, և կարգի գցել ճանապարհորդութիւնը դէպի Ամերիկա: Ամենից առաջ հոգաց ապահովելու մօր և քոյրերի վիճակը, թէ ինչպէս պէտքէ լինի իրա բացակայութեան ժամանակ: Իրա համար աւելի չէր մտածում. բայց երիտասարդական անհմտութենով երևակայում էր, թէ իւր ձեռնարկութիւնը յաջողակ կըր-

պով յառաջ կներթայ, որ նա չի պատահել ո՛չ մի արգելքի, որովհետև իւր հետ կլինին ճշմարտութիւնը և անբառնալի իրաւունքը:

Այդ տեսակ միամտութիւնը մարդկանց մէջ պաշտպանել է իրան: Ամենից առաջ, նա յայտնեց, թէ ծախում եմ իմ հայրական տունը, և բախտիցը շուտով գտաւ առնող, որ աւելի գին տուեց. դրանով աւելացաւ Բշորեկերի այրի կնոջ յոյսը: Այս սկիզբը ուրախացրեց ամենքին: Մայրը և քոյրերը սկսան զարդարել Ավգուստինին ուղևորութեան համար: Թէև ծանըր էր նորա համար թողնել ազգականներին և իւր հայրենիքը, բայց նրան յուսադրեց կազդուրեց այն միտքը, թէ շուտով կարող կլինի ինքն ապահովել մօրը և քոյրերին: Այսպէս ուղևորվում է նա բարեմաղթութեամբ և արտասուքով:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

## Անակնկալ բարեկամ.

Ավգուստինը գնաց Բրեմեն, որ մեծ վաճառաշահ քաղաք է, ուր կային շատ նաւեր, որոնցով կարելի էր ուղևորվել աշխարհի դէպի ամեն մասերը: Կամեցաւ տեղեկանալ թէ նրանցից ո՛րն է գնալու Ամերիկա: Հենց այդ ժամանակումը Եւրոպայի և նոր աշխարհի մէջ կային ո՛չ պակաս երկիւղներ: Ավգուստինը իմացաւ, որ մի մեծ վաճառականական նաւ ճանապարհ է ընկնելու այն օրերում դէպի Նիւ-Եօրք, գնաց գտնելու նաւապետին, որ խօսի նորա հետ:

Նաւապետը, որի անունն էր Ստետինգ, չափահաս և հմուտ ծովագնաց էր, որ սաստիկ սիրել էր հարաւային արեգակից: Նորա աչքերում բարութիւնը փայլում

էր, ով գործ էր ունեցել նորա հետ, կըվկայէր, որ նա մաքուր, ճշմարիտ և հաստատաբարոյ մարդ է: Նա կարողանում էր հաւատարմութիւն ազդել իւր ճանապարհորդակիցների մէջ մինչև անգամ ամենասաստիկ փոթորկի ժամանակը, երբ որ ամենին տիրում էր երկիւղը և յուսահատութիւնը, և ո՛չ ոք համարձակվում չէր անհնազանդ լինել նաւապետին և յետ կանգնել նորա հրամանից:

Եփգուստինը գտաւ նորան ծովի ափումը իջևանի մէջ, ձեռին մի բաժակ գինի բռնած: Ծեր ծովագնացը նստել էր լուսամտի վերայ և զուարճանում էր նայելով դէպի իւր նաւը, որ կոչվում էր „Կարոլինա“ որ կանգնած էր նաւահանգստում:

— Ի՞նչ է հարկաւոր Ձեզ, պատանի՛, հարցրեց նա Եփգուստինից, երբ որ Եփգուստինը յայտնեց թէ բան ունի խօսելու նորա հետ:

— Ես կամենում եմ գնալ դէպի Ամե-



րիկա, պատասխանեց նա հաստատապէս, բայց սիրտը սաստիկ բաբախում էր (թակթակում):

— Ահա տե՛ս ինչ եմ ասում, հարկաւոր է պատրաստվել շուտով, որովհետև „Կարոլինան“ (նաւը) վաղը ճանապարհ կընկնի թէ քամին չփոխարկվի, ուրեմն բերեք Ձեր կայքը նաւի մէջ, և հատուցէ՛ք ութսուն և հինգ տալեր (մէկ տալեր հաւասար է 95 կոպ. արծ.) և կարող էք այժմ տեղ ունենալ:

Այս խօսքը, որ է ութսուն և հինգ տալեր, զարմացրեց Եփգուստինին. նա ամենևին չէր մտածել թէ մինչև Նիւ-Եօրք այնքան թանգ կլինէր. այդ պատճառով էլ նա ճանապարհածախսի համար քիչ փող էր վեր առել և մնացեալը թողել էր մօր և քոյրերի համար: Խոնարհացնելով գլուխը սկսաւ խօսել տրտում: — Ես չունիմ կարողութիւն այդ գումարը հատուցանելու . . . . չե՞մ կարող արդեօք գործել ինչպէսի և իցէ գործ նաւումը, որ օգուտ լինի . . . . :

Նաւապետը սեղմեց Ավգուստինի ուսը և անդադար նայելով այդ գեղեցկին՝ պատասխանեց քաղցրութեամբ։

— Ես „Կարոլինայի“ տէրը չեմ, և չեմ կարող պակասացնել գինը, որ նշանակված է ամենի համար։ Լաւ է քեզ համար մնալ Եւրոպայումը, եթէ չես կարող հատուցանել ութսուն և հինգ տալերը։

Ավգուստինը կարող էր հատուցանել այդ գումարը, միայն մտածում էր, որ եթէ Ամերիկայում նա պատահի ձախորդութեան, այն ժամանակ էլ չէ կարող յետ դառնալ դէպի մայրը, և կարելի է, որ նրան էլ չտեսնէ։ Այդպիսի մտածմունքի մէջ՝ նորա աչքերը լցուեցան արտասուքով․ ինքն էլ շշնջելով ասում էր—ո՜հ խղճալի մայրիկ։

Այս խօսքերը շարժեցին նաւապետին, երբ որ լսեց։ Նա սկսաւ գթալ (խղճալ) այդ խեղճ տղայի վերայ, տեսնելով նորա պարզ և յարգելի հայեցուածքը, և այն,



թէ ինչպիսի քնքուշ կերպով սիրում է իւր մօրը, ուստի կամեցաւ նորան օգնել։

— Լսի՛ր, սիրելի՛դ իմ, ասաց նա քաղցրութեամբ, — ասա՛, ինչո՞ւ համար ես գնում Ամերիկա. ասա՛, եթէ միայն ծածուկ չէ այդ։ Ես եղել եմ այն տեղ շատ ժամանակ, ճանաչում եմ շատ Ամերիկացիներին և կարող եմ քեզ լաւ խորհուրդ տալ։ Ես ծեր եմ, բայց դու նորահաս, կարելի է, որ քեզանից աւելի տեղեակ լինիմ։ Մի՛ մտածիր, թէ ես քեզ հետաքրքրութենից եմ հարցնում, դու ինձ պարզապէ՛ս իմացիր։

Նաւապետի խօսքերը արտաշնչվում էին բարութենով․ և Ավգուստինը պարզապէս պատմեց նորան իւր պատմութիւնը։ Ծովագնացը լսում էր ուշադրութենով որպէս թէ դաս էր սովորում նորանից, և երբ վերջացրեց, նա պինդ սեղմեց նորա ձեռքը՝ աւելացնելով այս խօսքերը։

— Դու լա՛ւ մարդ ես։ Ցո՛յց տուր այժմ

քո հօրեղբօր թղթերը, ես կիմանամ այդ բանի միտքը, և կարողեմ քեզ ասել, թէ արդեօք ճշմարիտ են այդ վկայագիրները, և յոյս կայ արդեօք ստանալու ինչ և իցէ: Ինչպէս երևում է, դու ո՛չ ոքի հետ խորհուրդ չես տեսել, բաց ի մօրիցդ, որ չէ կարող շատ բան հասկանալ: Յիմարաբար և զո՛ւր կլինի Ամերիկա գնալդ, եթէ մի յոյս չկայ այդ գործի յառաջադիմութեան վերայ:

Թղթերը Ավգուստինի գրպանումն (ջիբումն) էին, նա իսկոյն տուեց Նաւապետ Ստետինգին, որ և ուշադրութեամբ նայելով ասաց:

— Այդ վկայագիրները օրինաւոր և ճշմարիտ են. նորա նամակները ամենը կարգին են . . . . . բայց մի մտածիր, մատաղ բարեկամ, թէ այդ ամենը հեշտութենով կստացվի: Այնտեղ շատ փող և շատ հոգացողութիւն է հարկաւոր: Այժմ դու չես կարողանում հատուցանել ճանապարհածախսը: Հարկա-



ւո՛ր է լաւ մտածել, թէ ինչպէս պէտքէ սկսել գործը:

Ներունին իւր ձեռքերը նեցուկ դրաւ (տայաղ արեց) իւր ալեզարդ գլխին, և մտաւ մտածմունքի մէջ. Ավգուստինն էլ զսպում էր իւր շնչառութիւնը, և սպասում՝ էր անհամբերութեամբ, թէ ինչ է ասելու այդ բարի մարդը, որ զգացել էր մի այնպիսի սէր դէպի ինքն ինչպէս դէպի մի հարազատ ազգական:

— Լսի՛ր, պատանի՛, ասաց նա բարձրացնելով գլուխը, — ով կ՚սիրէ իւր մօրը այնպէս ջերմեռանդութեամբ, ինչպէս դու սիրում ես, նա համարձակ կարող է ովկիանոսների վերայով անցնել, որ կարողանայ հասցնել նորան կառավարութեան և ապրուստի միջոց: Հենց միայն դրանից կարելի է զատել, որ դու օրինաւոր մարդ կլինես և կհասնես քո նպատակին: Ես կամենում եմ օգնել քեզ ինչով որ կարող եմ: Դու զուարճացի՛ր մի փոքր այս նաւահանգստում, ես կաշ-

խօսեմ քո գործի համար. դու սպասի՛ր ինձ, մի ժամից յետոյ կ'դառնամ, շատ կարելի է ուրախ համբաւով:

Շնորհակալ լինելով նրանից Եվգուստինը խոստացաւ սպասել նորա վերադարձին, և գնաց դէպի նաւահանգիստը „Կարոլինան" տեսնելու տնտղելու, որով ցանկանում էր ճանապարհորդել: Եթէ „Կարոլինան" գնար առանց նորա, նա պէտքէ սպասէր երկար ժամանակ, և մնար այն քաղաքում մինչև որ մէկ ուրիշ նաւ դուրս գար, այն ժամանակ անպատճառ կ'պակասէր և նորա փոքրիկ գումարը: Եթէ բարի Ստետինգի խոստմունքը յաջողվէր կատարվելու, կարելի է էժան գնով ճանապարհորդել: Այս մտքերով ման էր գալիս ծովի ափումը, և անհամբերութեամբ սպասում էր նաւապետի պատասխանին: Նորա մօտով անց ու դարձ էին անում շատ ծովային ծառաներ, որովհետև նաւահանգստում կանգնած էին շատ նաւեր, որոնք վեր էին առնում կամ դուրս բե-



րում զանազան ապրանք:

Այդ անդադար շարժմունքը, տեսակ տեսակ դէմքերը, մէկը թուխ միւսը սպիտակ, և բազմաթիւ մակոյկները (լոտկայ) որոնք կանգնած էին նաւահանգստի մօտ, աղաղակը և բարբառը գրաւում էին Եվգուստինի ուշադրութիւնը, որովհետև առաջին անգամն էր ծովափնեայ քաղաք տեսնելը: Նա ամենևին մոռացաւ, թէ ինչո՛ւ համար է ինքն այնտեղ, ուր ամեն բան նորա համար նոր էր և զարմանալի:

Յանկարծ մի յուսահատութեան ձայն հարկադրեց նորան կանգնել: Նորա առաջին կանգնած է լինում մէկ կին՝ ձեռքին մէկ երեխայ. կինը վանդակների (մանաշառ-ների) վերայ անզգուշութեամբ թեքված լինելով յանկարծ ձեռքից գցում է երեխային ջրի մէջ: Եվգուստինը նկատեց և տեսաւ մէկ երեխայ, որ ծփվում էր ալիքների միջում: Չ'մտածելով երկար, Եվգուստինը վեր գցեց իւր վերնաշորը, թռաւ ջրի մէջ, լողաց դէպի խեղդվող երեխային:

Նա շատ լաւ լողաց, և բռնեց մէկ ձեռքով գունատված աղջկանը, պահելով նրան ջրից բարձր՝ լողաց կրկին դէպի ցամաքը։ Այն տեղ արդէն հաւաքվել էին շատ հետաքրքիրներ, որոնք նայում էին այդ պատահմունքին ինչպէս մի նշանաւոր դիպուածքի վերայ և մի քանիսը սկսան բանալ իրանց նաւակները, և յառաջել դէպի երեխային փրկողը։ Աղջիկն անզգայացել էր, երբ որ Ավգուստինը մտցրեց նրան նաւակի մէջ։ Երբ նա դուրս եկաւ ծովի ափը, դէպի նա վազեց այն կինը արտասուքով և ուրախութեամբ։ Ավգուստինը երեխայն տուաւ նորան և զգուշութեամբ մինչդեռ կամենում էր հեռանալ, որ փոխէ իւր թաց հագուստը, հենց այս միջոցում յանկարծ բազմութեան միջից լսուեցաւ մէկ մարդի ձայն, որ և նայում էր ջրահեղձ երեխային, որի ուշքը կամաց կամաց յետ էր գալիս։

— Ո՞վ փրկեց Լիւսիային, ումի՞ց պարտաւոր եմ շնորհակալ լինիլ։



Կինը ցոյց տուեց մատով դէպի Ավգուստինը, որ և յանկարծ երևեցաւ նաւապետ Ստեւոնզի առաջ, որ խօսում էր շփոթված։

— Ահա՛ և երևում է, որ բարի գործը ամեն ժամանակ վարձատրվում է։ Ճանաչո՞ւմ ես արդեօք, Ավգուստի՛ն, այդ աղջկանը, որին դու փրկեցիր. դա նաւի տիրոջ աղջիկն է, այն նաւի, որով դու կամենում ես գնալ Ամերիկա։ Ես համոզել եմ Պարոն Սորոտին, որ անէ այդ բարութիւնը քեզ այնտեղ տանելու. դու փրկեցիր նորա սիրելի աղջկանը մահից, գնանք ուրեմն նորա մօտ, ես քեզ չեմ թողնել այժմ։ Լիւսիան իմ հոգեզաւակս է, ես սիրում եմ նորան հօր պէս։

Ավգուստինը կամեցաւ հեռանալ նորանից, որովհետև թրջված էր, բայց նաւապետը չկամեցաւ ականջ դնել նորան, վեր առաւ Լիւսիային և այդ պատանեակին, բերաւ դէպի մէկ մեծ տուն։ Երեխայի հայրը երբ տեսաւ, վազեց իսկոյն նո-

րանից առաջ սաստիկ շփոթված, արդէն հասել էր նորան համբաւը այդ պատահմունքի համար, նա էլ չկարողացաւ ոչինչ արտասանել, միայն գրկեց երեխային և նորա փրկողին:

— Լաւ է որ տիկինը (խանումը) չգիտէ ոչինչ, ասաց նաւապետը, եթէ ո՛չ նա կ՚մեռնէր երկիւղից: Այժմ ուրախութիւնը կ՚հարկադրէ մեզ մոռանալ այդ տարաբախտութիւնը. սակայն, պէտքէ առաջ հաղցնել այդ քաջ տղային ցամաք հագուստ, որ չլինի թէ նա հիւանդանայ:

Եկէ՛ք, նաւապե՛տ, իմ մօտ, ասաց պարոն Ստրոտլ,-վե՛ր առէք ամեն բան, ինչ որ հարկաւոր է, ես գնամ պատրաստեմ ամուսնոյս, ես դեռ չեմ կարող ուշքի գալ, և ամենևին չեմ մոռանալ աղջկանս փրկողին:

Երբ որ մօրը պատմեցին այդ պատահմունքը, նա գունատվեցաւ, և բռնեց երեխային ու ծածկեց նորան ջերմ համբոյրներով: Արտասուքը թեթևացրեց նորան:



Երբ որ Ավգուստինը ներս մտաւ, նա վազեց դէպի նա մեծարելու համար, բռնեց նորա ձեռքիցը և արտասուքով ասաց:

— Ես ինչպէ՞ս շնորհակալ լինիմ քեզանից, դուք փրկել էք իմ աղջկան, իմ սիրելի Լիւսիային . . . ինչո՞վ արդեօք կարող եմ վարձահատոյց լինել Ձեզ:

— Դա մի հասարակ պատահմունք է, պատասխանեց համեստաբար պատանին, ամենքըն էլ կարող են անել այդ:

— Բայց միայն այնտեղ կանգնած կային տանի չափ բերանաբաց մարդիք, և ո՛չ ոք չշարժեցաւ տեղից. ասաց նաւապետը ծիծաղելով, ես զո՛ւր չեմ սիրել քեզ առաջին անգամ տեսնելով:

Երկարաբանութիւն չէ հարկաւոր, թէ ինչպէս սիրեցին, և շնորհակալ եղան Ավգուստինից, և թէ ինչպէս մեծարեցին նորան: Նա հանդիպեցաւ բարի ընտանեաց,

և չիմացաւ թէ ինչպէս արտայայտէր իւր շնորհակալութիւնը: Նա կատարեալ բախտաւոր եղաւ իւր բարի գործովը:





ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

## Կրկին բարեկամ.

„Կարոլինա“ նաւի հարուստ տէրը՝ Ստրոտը կամեցաւ առատապէս պարգեւատրել Ավգուստինին իւրան հաւատարմութիւն ցոյց տալու համար, բայց Ավգուստինը չընդունեց ոչինչ. միայն խնդրեց Ամերիկա գնալու համար մէկ վկայագիր և մէկ յանձնարարական նամակ մի զօրեղ Ամերիկացու վերայ, որ կարողանայ հեշտացնել այնտեղ իւր հոգսերը և անբաւականութիւնները, որ կարող են պատահել մի Եւրոպացու (իրան) Նոր—աշխարհումը: Այդ անշահասիրութիւնը չէր կարելի, որ չզարթեցնէր համակրութիւն ազնիւ և բարի նաւապետի մէջ, որ սիրեց Ավգուստինին ինչպէս իւր հարազատ

որդուն և խոստացաւ հոգալ նորա համար ինչպէս իւր որդու վերայ:

Նաւի տիրոջ ընտանիքը կամենում էին պահել իրանց մօտ փոքրիկ Լիւսեայի փրկողին. բայց նաւապետը յայտնեց, որ չէ կարելի ժամանակ կորցնել, եթէ քամին յարմար լինի և յաջողակ սկսուի այն երկար ճանապարհորդութիւնը: Ինչ դորա մասին ինքն Եվգուստինը շտապում (փութում) էր, որովհետև համարում էր ամեն մի կորցրած ժամը, որ աշխատում էր ազատելու համար իւր ընտանիքը: Աորոտը և նորա կինը արտասուքով ճանապարհ դրեցին Եվգուստինին, ցանկանալով նորան յաջողութիւն: Նաւապետ Սեստինգը բերաւ նորան շուտ նաւի մէջ, և շուտով ,,Կարոլինան" բարձրացրեց խարիսխը (եակր, լոբար) և խաղաց ծովի մէջ: Գերոնի ծովաշրջիկը վեր առաւ Եվգուստինին իւր սենեակի մէջ և հոգաց նորա ամեն հարկաւորութիւնը, որ պէտք էին երկար ճանապարհորդութեան



համար: Մատաղ (ջահիլ) Բշտրեկերը այսինքն Եվգուստինը հոգաց, որ զուր տեղ ժամանակ չկորցնէ: Իմանալով, որ նաւումը կայ մի Ամերիկացի, որ գիտէ Անգլիացոց լեզուն, ինչպէս իւր մայրենին, խնդրեց նաւապետից թոյլտուութիւն, որ դաս առնէ այդ մատաղ նաւաստից (ծովային ծառայից):

— Այդ դժուար չէ, ի՞նչ ես կամենում սովորել, խօսի՛ր վայրենաբարոյ մարդկանց հետ, որոնց հետ բնակվի՛լ ես կամենում, պատասխանեց նաւապետը.— Նաւաստին կարգին մարդ է, քեզ ոչինչ վատ բան չի սովորցնել, բարեկամացի՛ր նորա հետ: Ես սիրում եմ, երբ դուք պարապվում էք գործով: Ձեզ համար ճանապարհն էլ երկար և ձանձրալի չի լինիլ:

Եվգուստինը շուտով ծանօթացաւ նաւաստի Կուբերի հետ, որին նաւումը կոչում էին համառօտ կերպով Նաւտի: Նա յանձն առաւ յօժարութեամբ Եվգուստինին դաս տալու Անգլիաց լեզուն,

և զարմացաւ իրա մատաղ ընկերի ընդունակութեան և ժրաջանութեան վերայ։ Ժամանակը անցնում էր նորանց համար աննկատելի կերպով։ Այդ խղճուկ զինաւորը՝ Նաղտին կապվեցաւ հոգւով Եւրոպացի Ավգուստինի հետ, որից կարողացաւ սովորել և ինքն շատ օգտաւէտ բաներ։ Այդ Ամերիկացին թէ և անկիրթ մարդ էր, բայց մաքուր և քաջ գործակատար էր. նաւապետն չսխալվեցաւ ընտրել այդպիսի ընկեր Ավգուստինի համար։

Ճանապարհորդութիւնը դէպի Ամերիկա այնքան յաջողակ չեղաւ։ Հակառակ քամիները շատ անգամ արգելում էին ճանապարհորդութիւնը, բայց երկիւղալի փոթորիկ չեղաւ, և „Կարոլինան“ տեսաւ վերջապէս ամպի միջում նոր աշխարհի ծովափը։ Ծովային բազմութիւնը ուրախացաւ, որ այդ դժուարին ճանապարհորդութիւնը մօտենում է դէպի վերջը։ Ավգուստինը այդ ժամանակ խօսում էր բաւական վարժ Անգլիացւոց լեզուն և կարո-



ղանում էր խօսակցել տեղական բնակչաց հետ։ Նրան շփոթեցին այն յոյսերը, որ պէտք է ստանայ հօրեղբօր ժառանգութիւնը և՛ կլինի հարուստ և՛ կհաստատվի բնակելու իւր նոր հայրենիքումը։ Նա հաւատում էր իւր նոր ընկերին իրա բոլոր գաղտնիքը, բայց Նաղտին չէր ուրախանում դորանով, ընդհակառակն նա տխուր էր և բազմահոգ. Ավգուստինն էլ նկատում էր այս բանը։

— Ինչ է պատահել քեզ, հարցրեց նա, սեղմելով Ամերիկացու ձեռքը։— Դու չես ուրախանում ամենևին, որ ծովի ափը երևում է և դու շուտով կլինես հայրենիքումդ։

— Ես ուրախ եմ, որ կհանգստանանք ցամաքումը, պատասխանեց Նաղտին թառաչ քաշելով, բայց . . . ։

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել քեզ, ի՞նչ կայ սրտումդ, դու չես կամենում այն բաժանել ինձ հետ։

Նաղտին սրբեց աչքերը, որոնց մէջ

փայլում էին արտասուքը։

— Ինձ համար ծանր է, որ ես քեզ սիրեցի, ինչպէս ընկեր եղբայր, ահա մենք պէտք է բաժանվինք։

— Ի՞նչ ես ասում, Նազոի՛, աղաղակեց վառված Ավգուստինը — ես քեզ շատ պարտաւոր եմ, մենք կ'մնանք միասին։

— Մի՞թէ կարելի է այդ, հարցրեց Ամերիկացին տխրութեամբ։ Եթէ լինէի ես հարուստ և ազատ մարդ, չէի բաժանվիլ քեզանից, որովհետև ազգական չունիմ, ես որբ եմ, ուստի ինձ համար ծանր կլինի առանց քեզ, ես ողորմելի ծովային զինաւոր (սալդաթ) եմ, բայց դու շուտով կլինիս հարուստ և կ'մոռանաս ինձ։

— Ի՞նչ ես խօսում դու հարստութեան և աղքատութեան վերայ։ Ես կապված եմ քեզ հետ այնպէս, ինչպէս դու ինձ հետ, պէտք է քեզ հետ միասին կրեմ թէ ուրախութիւն և թէ դառնութիւն, պէտք է ապրինք միասին ինչպէս հարազատ եղբարք։



— Մենք ի՞նչպէս թէ եղբարք ենք, դու կրթուած մարդ, իսկ ես, հասարակ վայրենաբարոյ։ Նաւի միջումը, մենք կարողանում ենք լինիլ ընկեր, բայց ցամաքումը ես քեզ ընկեր չ'եմ։

Ավգուստինը կարմրեցաւ շփոթվեցաւ, նորա աչքերը փայլեցան տժգոհութենով, ուստի ասաց,-Նազոի, դու անարգում ես ինձ. մի՞թէ դու կարծում ես թէ ես ընդունակ եմ, և կ'հեռանամ ընկերիցս ասելով թէ նա աղքատ է, և քի՞չ բան գիտէ ինձանից։ Դեռ ո՞վ գիտէ, կ'ստանամ արդեօք հօրեղբօրս ժառանգութիւնը, թէ ո՛չ։ Ամեն դիպուածքում ես ցանկանում եմ քեզ հետ միասին կենալ, քեզ հետ բաժանել ամենը, ինչ որ ունինք։ Այս երկրումը քո ընկերութիւնը և քո խորհուրդը ինձ համար թանկագին է հարստութենից։ Կարծեմ, դեռ ես քեզ պարտաւոր եմ, միայն թէ դու համաձայնիս չ'թողնել ինձ։

Ամերիկացին այդ խօսքերով շատ շար-

ժեցաւ, նա վստահացաւ Աւգուստինի ընկերութեան վերայ, թէև իմանում էր, որ ինքը կարող է ցոյց տալ նորան հարկաւոր ծառայութիւններ։ Նա զարգացած էր Ամերիկայի անտառներումը, և կարող էր կառուցանել գերաններից բնակարան, սերմել դաշտը, ինքն էլ հին որսկան էր, Հնդկացւոց ծանօթ, իմանում էր նորանց բնութիւնները և սովորութիւնները, և ճշմարիտ, որ կարող էր օգուտ բերել Եւրոպացուն, որի Ամերիկա գալը առաջին անգամն էր։

— Դու ճշմարի՛տ ես, Աւգուստի՛ն, ասաց նա մի փոքր մտածմունքից յետոյ,— ես կարող եմ քեզ հարկաւոր լինել։ Եթէ չունիմ ես փող, բայց ունիմ մի զոյգ երկար և ամուր բազուկներ (ձեռքեր) և հմտութիւն։ Հնդկացւոց համար շատ վատ են ասում, նորանց հետ վարվելը դժուար է։ Իմ հայրը կենում էր նորանց հետ բարեկամութենով ամեն ժամանակ, և ես չեմ վիճել և հակառակվել նորանց



հետ։ Նորա մահից յետոյ ես մտածեցի գնալ ծովային զինաւոր դառնալ, բայց այժմ ծովը ինձ ատելի է։ Քեզ հարկաւոր է օգնական քո գործերի մէջ, ես էլ պատրաստ եմ ծառայելու քեզ։

Աւգուստինը մօտեցաւ գրկելու իւր ընկերին չծածկելով նորանից ուրախութեան արտասուքը։ Բայց Նաղտոի դէմքը կրկին խոժոռեցաւ ջերմ գրկախառնութենից, և համարեա թէ մերժեց ընկերին։

— Քեզ ի՞նչ պատահեցաւ, Նաղտո՛, հարցրեց զարմացած Աւգուստինը, էլ ինչպիսի՞ դառնութիւն տխրացրեց քեզ։

— Այն, որ մենք կարգաւորում էինք մեր ապառնին առանց լաւ մտածելու։ Ես չեմ կարող գալ քեզ հետ, որովհետև ես պարտաւորված եմ յետ դառնալու մի և նոյն նաւով դէպի Եւրոպա։ Ես այնպէս եմ վարձված։

— Մի՞թէ։

— Գիտուք թէ կան մարդիկ, որոնք դորանով չեն խղճահարվիլ և կմնան այնտեղ

որտեղ լաւ է, բայց ես չեմ կարող կոտրել խօսքս։

— Մի՞թէ նաւապետ Ստետինգը չէ կարող ազատել քեզ։

— Կարո՛ղ է, միայն նա պարտաւոր է, որ առաջ իմանայ Ստրոտի համաձայնութիւնը։ Սակայն, ես այդ լաւ չգիտեմ, թէ ինչպէս կ՚լինի. միայն իմանում եմ, որ ես կատարեալ բախտաւոր կ՚լինէի, եթէ կարողանայի չբաժանվիլ քեզանից։

— Կարո՛ղ էք չ՚բաժանվիլ, ի՛մ որդիք ասաց նաւապետը բարձր ձայնով, որ աննկատելի կերպով մօտացել էր այդ տղամարդերին և լսել էր նոցա խօսակցութիւնը։ — Ինչո՞ւ էք զարմացած բացել Ձեր աչքերը իմ վերայ, շարունակեց նա ծիծաղելով։ — Ես նաւի մէջում կատարեալ իրաւունք ունիմ, կարող եմ արձակել մինչև անգամ ծովային ամեն զինաւորներին ո՛չ թէ միայն մէկին։ Ես յօժարութենով արձակում եմ քեզ, Նադոլ՛, Եվգուստինի հետ գնալու, որովհետև Դուք



Երկուսներդ էլ լաւ տղերք էք։ Ստրոտը յօժար կ՚լինի, որ ես կատարել եմ Լիւսիային փրկողի ցանկութիւնը։ Դուք երկուսներդ կ՚լինէք ուրախ միասին, և այդ ընկերութիւնը կ՚պահպանէ Ձեզ ծանր վայրկեաններումը։ Ես որովհետև ես միշտ բաւական եմ եղել Նադոլի ծառայութեամբը, այդ մասին տալիս եմ նորան Ստրոտի կողմից հարիւր տալեր ընծայ, որ գնէ իրա համար մի կտոր հող Եվգուստինի կայքից մօտ։ Իբրև բախտաւոր ընկերներ ապրեցէ՛ք միասին, և երբ որ նաւապետ Ստետինգը բոլորովին կ՚ծերանայ և անպէտք կ՚լինի գործի համար, տուէք և նորան մէկ տան անկիւն (քունջ) ձեզանից մօտ, ուր կարողանայ անցուցանել մնացեալ օրերը և հողին տալ իւր ոսկորները։

Ուրախութիւնը և շնորհակալութիւնը այնպէս շփոթեցին այդ մատաղահասներին, որ չգտան մէկ խօսք, թէ ինչպէս արտայայտեն իրանց զգացմունքը։ Նոքա նաւապետի ձեռքը բռնած համբուրում էին որ-

դիական քնքուշութենով:

Բաւական է, ասաց ծերը շարժված:— Եղէ՛ք առաքինի, բարի և ճշմարտասէր, սիրեցէ՛ք մինչև անգամ Ձեր թշնամիներին, և Ձեր ամեն ձեռնարկութիւնը կ'յաջողվի Ձեզ: Ահա մենք արդէն ծովի ափումըն ենք պէտք է հրաման տամ նաւահանգստեան տեղը մնալու:

Գնաց նաւապետը, ուր իրա պարտաւորութիւնն էր, թողնելով նրանց կատարեալ բախտաւոր: Այդ մատաղ մարդիկը վստահաբար սպասեցին ապագային, նորանց աչքերը փայլեցան ուրախութեան արտասուքով. նոքա գրկախառնուեցան ինչպէս եղբարք, խոստանալով սուրբ պահել բարի նաւապետի խորհուրդը: Արդէն նորանց շուտ երևեցաւ ծովափը, որ այնպէս ամպամած էր, որ հազիւ թէ որոշվում էին տուները, ծառերը և աշտարակները (բուրջ, ղալայ): Ավգուստինը հետաքրքրութենով նայում էր իւր նոր հայրենիքի վերայ, և նորա սիրտը սաստիկ թակ-



թակվում էր մէկ բանի ակնկալութենից: Վերջապէս „Կարոլինան“ մտաւ նաւահանգիստը: Նաւապետը հրամայեց արձակել նաւակը, և ասաց այդ սիրելի ընկերաց:

— Պատրաստվեցէ՛ք, որ գաք ետևիցս, ես ինքս պէտք է տանեմ Ձեզ, Ավգուստին, այն մարդի մօտ, որին յանձնել է Սարոտը: Յուսով եմ, որ նա շատ կօգնէ քեզ այդ գործումը, շուտով դու էլ կապահովես քո մօր վիճակը: Շո՛ւտ արէք, որ չլինի թէ քամին փոխարկվի:

Այդ երկու ընկերները ունէին փոքր կայք, այդ էլ շուտով պատրաստեցին: Ծովի ափն էին հասել, ոչինչ չէր մնացել, բայց այդ կարճ ժամը երկար էր երևում նորանց համար, որովհետև շտապում էին շուտով ցամաք դուրս գալու: Վերջապէս դուրս եկան: Նաւապետը գնաց շուտով Սարոտի բարեկամի մօտ, որ Նիւ-Եօրքացի հարուստ վաճառական էր. նա սիրով ընդունեց և ցոյց տուեց ջերմ համակրութիւն այդ մատաղ մարդու-գործի համար:



ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

## Նոր աշխարհը.

Ամառվայ գեղեցիկ առաւօտ էր, Ամերիկայի երևելի և կենդանագրական անտառի հով շուաքի տակ դուրս էին եկել երեք մատաղ մարդիկ։ Անտառի (ծմակի) շուրջն էր հանդարտ, կանաչը փայլում էր արեգական ճառագայթներով, որ թափանցում էին նորա թանձր (ղալին) տերևների միջով, ծառերը կանգնած էին կարգին դասաւորութենով, ծաղիկների հոտը բուրում էր օդի մէջ, և երբեմն թռչունները թռչում էին մէկ ծառից դէպի միւսը խանգարելով անտառի խաղաղ



լռութիւնը իրանց ճռուողելովը։ Այս ճանապարհորդները զուարճանում էին բնութեան զարմանալի տեսարանովը, և երբեմն ականջ էին դնում և նայում անտառի թանձրութեանը, այս՛ մի և նոյն ժամանակ կասկածելով և վտանգներից։

Նոքա երեք հոգի զինաւորուած էին, և ունէին հրացաններ (թուանկ) և որսական մեծ դանակ։ Նրանցից մէկը ունէր դամահավք (որսի մեծ դանակ), այդ զէնքը և դէմքի թուխ գոյնը որոշում էին Հնդկացուն։ Նա այդ երկու Եւրոպացիների առաջնորդն էր, որոնց հետ երբեմն էլ սկսում էր խօսել։

Եւրոպացիները Ավգուստին և Նադտոլին էին։ Նաւապետ Ստեւոնգը և Նիւ-Եօրքացի վաճառականը իսկոյն գործ դրին վկայագիրները, որ բերել էր Ավգուստինը, և թէպէտ հեշտ չէր հանիլ հօր եղբօր կայքի ժառանգութեանը, սակայն պաշտպանութեամբ և փողով գործը սկսաւ դէպի առաջ գնալ։ Ավգուստինը ընդուն-

վեցաւ օրինաւոր ժառանգ, նրան տուին հօրեղբօր փողերը և ընդունեցին նրան ընդարձակ երկրի տարածութեան տիրապետող: Դրանից աւելի չէր կարելի գործ տեսնել, որ նա հոգաց ինչևիցէ շատ դժուարութենով տիրապետելու համար այն երկրին, որտեղ կենցաղավարում էին Հնդկացի ազգերը: Նա գնաց այնտեղ իւր ընկերի և ուղեցուցի հետ, ուղեցոյցը տեղացի հասկացող մարդ էր, որ լաւ էր ճանաչում Ափգուստինին պատկանող տեղը: Նիւ-Եօրքացի վաճառականը ամենահարկաւոր նիւթերով լինաւք տարաւ այդ մատաղների (ջահիլների) վերայ, խորհուրդ տուեց նորանց, թէ ինչպէս պէտք է խօսիլ և վարվիլ Հնդկացի ուղեցուցի և ուրիշ զինաւորների հետ, որովհետև և առանց նոցա համաձայնութեան չէ կարելի բնակվիլ այն երկրումը, որ համարում էին նոքա իրանց սեփականութիւն: Պէտք էր գործ դնել վայրենաքարոնների համար ընծաներ և քաղցրութենով համոզել նրանց



առանց մի սպառնալիք գործ դնելու ո՛չ մի բանի համար, որովհետև առանց այդ կարմրակաշիների թոյլտուութեան ո՛չ մի Եւրոպացի դեռ չէր կարող բնակվիլ նորանց կողմերումը:

Արեգակը բարձր կանգնած էր կապոյտ և պարզ երկնքումը: Ճանապարհորդները մօտեցան մէկ բլրակի (փոքրիկ սարի), որի վերայ կար մէկ հաստ կաղնի ծառ, ուղեցոյցը մօտենալով նրան ընկողմանեց նորա փափուկ մամուռի վերայ հանգստանալու նպատակով:

—Ինչո՞ւ ես պահում մեզ, հարցրեց Ափգուստինը,—դեռ օրը աւելի չի անցել, մենք չենք նեղացած, կարող ենք գնալ դեռ ևս, երևի դու նեղացել ես, Դակոտախ:

Կարմրակաշին ծիծաղեցաւ արհամարհանքով և ասաց:

—Դակոտախը կարող է գնալ երկար, ամենևին չի՛ նեղանալ, ամենևին չի՛ սովածանալ, ես հանգստանում եմ այն

պատճառի որ ու՛ր ենք հասել:

— Ի՞նչպէս ենք հասել, ապա ո՞րտեղ է լիճը, որի համար դու ասացիր, ահա՛ մեր-շուրջը անտառ է:

Հնդկացին լուռ ցոյց տուեց ձեռքով դէպի արեւելք, ընկերները մօտիկ արին դէ-պի այն կողմը, եւ Դակոտին սկսաւ խօսել:

— Ոչինչ չէ երեւում, բայց լիճը պէտքէ որ մօտ լինի, կարմրակաշին ամենեւին չի սխալվիլ:

Նոքա անցան դէպի առաջ մի քանի քայլ, եւ շարժեցին ցանկը (չափարը) որ բուսած թփերից (բոլ) էր, իսկոյն նրանց աչքին երեւցաւ պարզ փայլուն լիճը, որի մէջ խաղում էին արեգական ճառագայթ-ները:

Այդ տեսարանը այնքան հիանալի էր, մինչեւ անգամ Ալֆուսոնը եւ Դակոտին չկարողացան զսպել հիացման աղաղակը: Լիճը ընկած էր նորանց առաջին ինչպէս ողորկ հայելի, կանաչ ափերով, Այդ անտառի հարիւր տարեկան ծառերը կար-



ծես նայում էին նորան, եւ փոքր ինչ հեռի երեւում էին սարերի շուշաններ: Այդ փառաւոր տեղի վերայ փայլում էր պա՛րզ կապոյտ երկինքը եւ պայծառ արեգակը:

— Ինչպիսի՜ գեղեցկութիւն, ինչպիսի՜ զարմանք, աղաղակեց Ալֆուսոնը խորին զգացմունքով. — Ի՞նչ կարող է այս տեղի-ցը աւելի գեղեցիկ լինել: Այս տեղ կ՚ցանկանայի անցուցանել իմ բոլոր կեան-քը, այս տեղ կլինէի ես բախտաւոր ամեն թշուառներից: Չե՞մ սխալվում արդեօք, Դակոտա՛խ: Մի՞թէ այդ տեղը պէտ-քէ պատկանի ինձ. դա իմ ժառանգու-թիւնս է՞:

— Կարմրակաշին չի սխալվիլ, պատաս-խանեց Դակոտին.— այո՛, այդ այն լիճն է, որի ափումը քո կալուածքն է, այդպէս է յայտնուած մեզ մեր պլանի մէջ: Ահա՛ սարերը, անտառը, էլ կարծիք չկայ: Ես ուրախ եմ, որ քո կալուածքը այդպէս կենդանագրական է, ճշմարիտ որ այսպէս

ցանկալի է ապրել։

— Դա կատարեալ դրախտ է, մայրս ուրախ կլինի և շնորհակալ, նոյնպէս էլ քոյրերս բախտաւոր կլինէին երբ որ բնակվէին նոքա այստեղ։ Ես այսպէս եմ մտածում, Նադօ՛, որ կառուցանեմ այստեղ տուներ։

Ես էլ այդպէս եմ մտածում, որովհետև յարմար տեղ է, պակասութիւն էլ չենք կրել նիւթերի կողմանէ շինութեան մասին։ Եւ այդ լճի մէջ պէտք է որ շատ ձուկն լինի, անտառումն էլ նոյնպէս որսի կենդանիք, երկիրն էլ կլինի պտղաւէտ։ Տե՛ս, ահա՛ փոքրիկ գետը հոսում է մօտով և թափվում է լճի մէջ։ Այստեղ գտնվում է ամեն բան, ինչ որ հարկաւոր է լաւ մշակների համար, ինչպէս մենք ենք։ Միայն ամենից առաջ մենք պարտաւոր ենք աներկիւղ լինել, և՛ բարեկամանալ Հնդկացւոց հետ և՛ ստանալ նոցա համաձայնութիւնը այս երկրին տիրապետելու մասին։ Առանց դոցա հա-



մաձայնութեան մենք պէտք է ձեռք քաշենք ամենից, և չխորհենք մօրդ գալու համար այս տեղ։

— Կարելի՞ է արդեօք, որ վայրենաբարոները սպանեն նեղացնեն մեզ։ Ամերիկական զօրութիւնը գտնվում է այս տեղի երեք մասումը, և մենք ամեն ժամանակ կարող ենք գտնել պաշտպանութիւն նրանցից։

— Դու այդպէս ես ասում էնդուր, որ լաւ չես ճանաչում կարմրակաշիններին, ասաց Նադօն.— Նորանց ատելութիւնը ահարկու և երկիւղալի է։ Առաջինն կզարթնանայ քեզանում երկրայութիւն, դու կունենաս աներևութարար թշնամիներ, և չես կարող խնդրել ո՛չ մեկի օգնութիւնը։ Կարելի է քեզ համար կլինէին վրէժխնդիր. բայց ի՞նչ պէտք է դրան, գիտե՞ս. դու առաջ պէտք է ծխես հաշտութեան ծխաքարշը Հնդկացւոց վրանումը այդ ազգի Գլխաւորի հետ. և այնուհետև կարող ես տուներ կառու-

ցանել (շինել)։ Գնանք մեր ուղեցուցի մօտ. նա կտանի մեզ իւր հայրենակիցների մօտ։

— Եւ դու հաւատո՞ւմ ես, որ նոքա կընդունին մեզ բարեկամաբար։

— Ինչո՞ւ չէ. կարմրակաշիները բարի և քաղցր ժողովուրդ են։ Նոքա կսիրեն ընծաներ. դու վե՛ր առ նրանցից բաւական։ Այս տեղ երկիրը բաւական է ամենի համար, և այդ պատճառի նոքա ակամայ կ՛յարգեն սպիտակներին, համարելով իրանց նրանցից բարձր։ Միամի՛տ կաց, ի՛մ ընկեր, մենք կ՛համաձայնվենք մեր վայրենաբարոյ դրացիների հետ։

Նոքա գնացին մօտեցան Հնդկացուն, որ ընկողմանած էր կաղնի ծառի տակ նստեցան նրանից մօտ, և սկսան յայտնել նրան իւր (այսինքն հնդկացու) լեզուով թէ ցանկանում ենք անուշթիւն գնալ կարմրակաշի ազգի Գլխաւորի մօտ, որն որ մօտ է։ Դակոտախի (ուղեցույցը) լսեց ուշադրութեամբ և պատասխանեց։



— Ամենից մօտ բնակվում են Դելավարները։ Ես կասեմ Գլխաւորին, թէ սպիտակադէմ մարդիկ են եկել և կամենում են բարեկամանալ քեզ հետ. նոքա եկել են առատ ձեռքերով։

— Մենք էլ գա՞նք քեզ հետ, հարցրեց Եվգուստինը։

— Ո՛չ, ես մենակ կերթամ և յետ կ՛դառնամ պատասխանով մինչև արեգակի մայր մտնելը։ Դուք սպասեցէ՛ք այս տեղ։

Այդ վայրենաբարոյ անձն ճանապարհ ընկաւ արագընթաց քայլերով անտառի միջով, և շուտով ծածկվեցաւ նորանց աչքերից։ Այդ երկու բարեկամները սկսան հանգստանալ հենց այն կաղնիի տակ. փոխանակ ննջելու նոքա սկսան խօսիլ իրանց սկսելի գործի և Դակոտախի ուղարկելու մասին։ Այդ դեսպանութիւնը նրանց բաւական խառն էր երևում, և մինչդեռ խօսում ծիծաղում էին վայրենաբարոնների երևելի կերպարանքների

վերայ, ահա այդ միջոցում յանկարծ լռուեցաւ շաչիւն (ձայն) Թփի մէջ․ Նազտին լսեց, սեղմեց ընկերի ձեռքը, և ցոյց տուեց նրան մատով դէպի գեղեցկակազմ եղջերուն, որ կամենում էր անցկենալ Թփի միջից, որ և աշխատում էր Թագնուիլ երկիւղից, միայն իւր բազմաճիւղ եղջիւրները (պոզերը) մատնեցին նրան։

— Ահա գեղեցիկ որս, որից լաւ խորոված կլինի հծծեց (քսփսաց) Նազտին.— բայց նա դեռ հեռի է։ Ավգուստի՛ն, վե՛ր առ հրացանդ և աշխատի՛ր ուղղելու գնտակդ ուղղակի դէպի եղջերուն։ Մեզ յարմար է ապրել այս տեղ որսով։

— Ավգուստինը հանդարտ բռնեց հրացանը և սպասում էր, որ եղջերուն (եղնիկ, մարալ) մօտենայ, և երբ որ Թփի ետեւից դէպի յառաջ խաղաց և կամենում էր փախչել, իսկոյն հրացանը արձակեց, այդ գեղեցիկ անասունը գլորվեցաւ։ Շուտով մօտեցան նրան ուրախացած, որ յաջողվեցաւ իրանց որսը, այդ միջոցում յան-



կարծ դուրս եկաւ մէկ գեղեցկակազմ Հնդկացի ձեռքին բռնած աղեղն ու նետերը, դամահակդն (որսի դանակը) էլ գօտի մէջ․ այս էր նորա միայնակ յոյսը։ Այդ կարմրակաշիի դէմքը յայտնում էր բարկութիւն, աչքերը փայլում էին չարութենով, նորա կրծքից դուրս էր գալիս լուռ կամ խառն ձայն „հուք", որ նշանակում է այդ վայրենաբարոների մէջ սաստիկ բարկութիւն։ Վայրենաբարոն տեսնելով երկու սպիտակ մարդկանց, նա բռնեց իւր որսի մեծ դանակը և բարձրացրեց խփելու նրանով։ Ավգուստինը և Նազտին զարմացած նայում էին այդ գեղեցիկ տղամարդ վայրենաբարոյի վերայ։ Նազտին ասաց իւր ընկերոջ։

— Դա Դելավար է (վայրենաբարոնների մի ցեղ)․ չէ հարկաւոր դորա հետ կռուել։ Ավգուստինը իսկոյն կտրեց մէկ կանաչ ճիւղ, և կամենում էր տալ նրան, որ կանգնած էր վառված և սպառնում էր բարկութենով։ Ի վերայ այսր ամենայնի Նազտին պատ-

բաստ պահեց իրա ձեռքում հրացանը (Թուանդը) այն նպատակով, որ արձակէ Գլեղավարի վերայ, եթէ տեղից կ'շարժի փնտռելու իրա ընկերին. բայց կարմրակաշին կանգնեցաւ անշարժ արձանի պէս, միայն նորա փայլուն աչքերը յայտնում էին, որ նա սուր մարդ է: Ավգուստինը ձգելով դէպի նա ձիուղը, ասաց:

— Մենք բարեկամ ենք կարմրակաշիներին և ցանկանում ենք կենալ նորանց հետ խաղաղութեամբ. դու էլ եղիր մեր ընկերը, մեկնի՛ր ինձ ձեռքդ ինչպէս եղբօր, պէտք է ծխենք միասին հաշտութեան ծխաքարշը:

— Ինչո՞ւ համար էն եկել այս տեղ սպիտակ դէմքով մարդիկը, աւելացրեց վայրենաբարոն, որ գողանա՞ն Վենոնդի եղջերուն, որի ետևից նա շուտուց էր ընկել որսալու: Ինչո՞ւ համար էք դուք եկել մեր երկիրը, մենք չենք կարող ձեզ բարեկամ լինել. Վենոնդան տեղը չէ՛ պնելու իւր սուրը:



— Եթէ այդպէս է, ես քե՛զ կտամ, ի՛մ եղբայր, մեր մեռցրած եղջերուն, ասաց հեգնութենով Ավգուստինը. — վե՛ր առ, քեզ լինի:

— Վենոնդան չէ՛ ընդունիլ ընծայ, ասաց վստահաբար Գլեղավարը, նա մեծ որսորդ է, և կ'գտնէ ուրիշ եղջերու. դէպի սպիտակադէմքերը նա չէ՛ մեկնիլ իրա ձեռքը, այլ պէտք է վրէժխնդիր լինի:

Ավգուստինը մինչ կամենում էր խօսիլ, նա այլ ևս թոյլ չէր տալիս նրան ասելու մէկ խօսք, ինքն աւելացրեց:

— Վենոնդան չէ կամենալ երկար լսել սպիտակադէմքին, նորա ականջները փակված են: Ու արձակելով դէպի այդ ընկերները իրա սպառնողական հայեցուածքը, բռնեց ձեռքին սուրը և կամենում էր գցել դէպի նրանց այդ զէնքը. Նադոին էլ բարձրացրեց հրացանը, արդէն պատրաստ էր արձակելու Գլեղավարի վերայ, և մինչդեռ կամենում էր հարկադրված վրէժխնդիր լինել, Ավգուստինը

ասաց, դա ամենևին հաճելի չէ, ˚Աադ-ոտի՛, ես բարւոք չեմ համարում այդպիսի կերպով վերջացնել կռիւը, իմանալով, որ ˚Հնդկացին ամենևին չի՛ ներիլ իւր թշնամուն:

— Լսի՛ր Ավգուստի՞ն, ասաց նա իւր ընկերին.— բարւոք եմ համարում խփել այդ վայրենաբարոյ անձին. թո՛յլ տուր ինձ վերջացնել նորա հետ բանը:

— Ո՛չ, 'ի սէր Աստուծոյ մի՛ սպանիր. աղաղակեց Ավգուստինը և իսկոյն բռնեց ընկերի հրացանը:

Վիրաւորը անթարթ աչքով նայում էր այդ երկու ընկերների վերայ. իբր թէ աշխատում էր հասկանալ նորանց խօսքերը և մեսաւ ˚Աադոտիի շարժումն, որ թռաւ դէպի միւս կողմը թփի մօտ, սպառնալով իւր հրացանովը: ˚Աադոտին կամենում էր յարձակվել դէպի նա, բայց Ավգուստինը կանգնացրեց նրան ասելով:

— Ո՛չ, իմ ընկեր, թո՛ղ այդ վայրենին հեռանայ: Նա կարելի է զղջայ և հասկա-



նայ, որ մենք սպանել ենք եղջերուին չիմանալով, որ և ինքն նորա ետևից ընկած է եղել որսալու:

— Մի՛ կարծիլ, թէ վայրենաբարոն կ՛ըխոստովանի իրա յիմարութիւնը: Այդ քաջը արդէն մեր չարագոյն թշնամին է, դա յարմար ժամանակ է որոնելու, որ ուղարկէ մեզ այն աշխարհքը (այսինքն սպանէ,) Ամենևին չի ներիլ նա, որ մենք սպանել ենք եղջերուին. դա կ՛համարուի մեծ որսորդի համար ամօթ ու նախատինք: Արդարև, ես հանդարտ կլինէի, եթէ ուղղած լինէի դէպի նա գնտակս:

— Ի՞նչ ես ասում դու ˚Աա՛դոտի, եթէ ես սպանութենով եկած լինէի այս երկիրը գնելու, ես կզրկվէի նորանից, ես բոլոր կեանքս կանցուցանէի խեղճութեան մէջ:

— Դու ճշմարիտ ես ասում Ավգուստին, միայն այստեղ մարդկային կեանքը այնքան մեծ նշանակութիւն չունի, ինչպէս Եւրոպայում ունի, և այդ դու ինքդ շուտով

կփորձես: Դու պէտքէ կեանք վարես այդ վայրենաբարոների հետ. այնպէս էլ նոցա սովորութեանը պիտի կրթվիս:

— Ո՛չ մի ժամանակ, ասաց Եվգուստինը հաստատապէս. թո՛ղ լինին դէպի ինձ անիրաւ, բայց ես ինքս ամենևին չեմ վարվիլ խղճմտանքիս ընդդէմ: Ուստի Գուլաշարը իւր կողմից ճշմարիտ է: Ես կամենում եմ յաղթել նորան քաղցրութեամբ և ձեռք բերել նորա բարեկամութիւնը:

— Զաւա՛լ թէ կարողանաս, ասաց Նաղուին . . . . . —Ամենը ճշմարիտ է, այդ անապատը կ'թաղնուի ուր և իցէ մէկ մեծ ծառի քամակում և նստահար կանէ մեզ: Այո՛ և. խոստացութիւնները քէզ կօգնեն այդպիսի դիպուածքում: Լաւ կ'լինի, որ զուարճանանք մեր եղջերուն և պատրաստենք նրանից մեզ համար խորոված: Ես քաղցած եմ:

Մատաղ մարդիկը թեքվեցան եղջերուի մօտ, և Նաղուին յանկարծ աղա-



ղակեց.—լա՛ւ գցեցիր, մե՛ր տղայ, դու լաւ նշանառու կ'լինես: Օգնի՛ր ինձ հանելու այս եղջերուաւոր բարեկամի փորոտիքը, որ հասցրեց մեզ այսքան նեղութիւն, յետոյ ես կ'պատրաստեմ կրակ. և կ'խորովեմ լաւ ճաշակելի պատառները: Գակոտախն էլ նոյնպէս շնորհակալ կլինի, երբ մենք կհասուցանենք նրան խորոված:

Այդ պատրաստութեան միջոցում նոքա մոռացել էին Գուլաշարին, և ուրախութեամբ խօսակցում էին իրար հետ, սակայն վայրենաբարոն ծածուկ լսում էր և կարծում էր թէ այսքան խօսքերը իրա համար են: Երբ որ Նաղուին կտրեց պատառը և կամենում էր բարձրացնել գլուխը, իսկոյն թնդաց մէկ ձայն, և նետը թռաւ մի փոքր բարձր նորա գլխից և ցցուեց ծառի միջումը:

— Լա՛ւ եղաւ, որ ես շուտ չբարձրացրի գլուխս, աղաղակեց Նաղուին.—այդ անիծեալ վայրենին կամենում էր նետով խփել գլխիս: Երդէն նա էլ չէ՛ աղա-

վէւ ընձանից։

Եւ խնդոյն բռնելով հրացանը նա յարձակեցաւ դէպի թուփը, արձակեց հրացանը և յետ դարձաւ անբաւական։

— Այդ Դելավարը այնպիսի ոտեր ունի, որ մինչև անգամ չի հասնում նորան գնտակը։ Դու տեսնում ես, Ավգուստին, որ քո վեհանձնութիւնդ անտեղի է։ Ես չասացի՞ թէ նա չի հանգստանալ, մինչև չմեռցնէ մեզ. դա այդպիսի մի ազգ է։

— Բայց մենք այդ ազգից չենք, ասաց Ավգուստինը. մենք պատրաստ ենք ներել մեր թշնամիներին։ Եթէ մենք նորա ատելութեանը կ'պատասխանենք սիրով, նա կզղջայ իւր չարութեան վերայ։

— Ուրեմն սպասի՛ր մինչև այն ժամանակ, ո՜հ, սպասի՛ր ամեն մի վայրկեան մահին։ Շատ ուրախ կլինէի, եթէ նրան սպանած լինէի, երբ որ աչքիս առաջին էր։

— Ո՛չ Նաթան, ես չեմ կամենում սպանութիւն, մտածի՛ր այս խօսքերի վերայ „Մենք պարտաւոր ենք սիրել մեր



թշնամիներին, պարտաւոր ենք անել նրանց բարութիւն"։ Վայրենաբարոն այդ չի՛ կարող հասկանալ, բայց 'ի դրանից նորա վարքը անպիտան են, որովհետև նորա միտքը դատողութիւնը լուսաւոր չեն։ Հարկաւոր է ապացուցանել նորան քաղցրութեամբ և հեզութեամբ, թէ մենք նորա ընկեր ենք և բարեկամ, և կամենում ենք նորա լաւութիւնը, դորանով նա կուղղուի։

Ամերիկացին տեսնելով, որ չի կարողանում յաղթել իւր ընկերին, սեղմեց նորա ուսը։ Նա լաւ էր ճանաչում վայրենաբարոններին և յոյս չունէր, թէ նոքա կշփոթեն Ավգուստինի կարծիքը, որ թշնամեաց ներելու համար էր։ Յատկապէս այդ Վենոնդան չունէր ամենևին մարդկային զգացմունք, և աւելի նման էր այնպիսի մարդի, որ պատրաստ է հետամուտ լինելու անգամ իւր թշնամուն և մահից յետ։

Արկին սկսան կերակրի պատրաստութիւն

տեսնել։ Կրակը վառվում՝ էր պայծառ, եղջերուի մսիցն էլ խորովվում շամփուրի վերայ։ Երկար ճանապարհորդութիւնը և խռովութիւնը չշփոթեցին նրանց։ Փոքրիկ փայլուն գետը զովացնում էր նրանց իւր սառն ջրովը, որով և կարողանում էին համբերութեամբ սպասելու Դակոտախի վերադարձին, որին ուղարկել էին Գելավարների մօտ։





ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ.

## Հնդկացիներ.

Արեգակը արդէն իջանում էր ծառերի գլուխներից, և ոսկեզօծում էր իւր վերջին ճառագայթներովը լիճը և սարերը, երբ որ երևեցաւ այդ երկու ընկերների առաջ Դակոտախը, որ և ասաց.

— Գելավարների գլխաւորը պատրաստ է ընդունելու բարեկամաբար սպիտակադէմքերին, և պէտք է ծխէ հաշտութեան ծխաքարշը, երբ որ նորա կնատին խորհրդի խարոյկի (վառած կրակի) շուրջը։ Ունկասը՝ Գելավարների գլխաւորը սպասում է տաբականներիդ։

— Դու Դակոտա՛խ, մեզ քո եղբայրներիդ մօ՞տ ես տանում, հարցրեց Ավգուստինը։

— Ի՛ս ժամին, պատասխանեց վայրենա-
բարոն։

— Մենք պատրաստ ենք, ասաց Նադոին. -Միայն կարելի է դու նեղացած լինիս, քեզ էլ հարկաւոր է հանգստանալ։ Մենք որսել ենք եղջերու և խորովել ենք մեկ մասն. ահա՛ քո բաժինը, մենք քեզ համար ենք պահել դրան։

Այդ կարմրակաշին թուխ դէմքը փայլեց ժպիտով (քմքածիծաղով)։ Նա վեր առաւ առաջարկած պատառը, և ասաց.-Սպիտակ եղբայրները բարի են, նոքա չեն մոռանում թուխ բարեկամներին. ես շնորհակալեմ։

Նա վայելեց շուտով, վեր առաւ ձեռքով ջուր և խմեց մի քամին ումպ (կում) և հրաւիրեց նրանց գնալու իրա ետևից։

— Արեգակի մայր մտնելու ժամանակ է, մենք պէտք է շուտ գնանք, Գեղավարների Գլխաւորը սպասում է խորհրդի կրակի մօտ։

Նա վեր առնելով իւր քսակը և զէնքը գնաց արագապէս դէպի առաջ ճանապարհ ցոյց տալով ընկերներին։ Երբ որ



նոքա մի ժամ ճանապարհորդութենից յետոյ դուրս եկան անտառեցը մեկ հովտի մէջ, նորանց աչքերին երևեցաւ Հնդկացւոց գիւղը, որ փայլում էր արեգակի վերջին ճառայթներովը։ Այդ մերձակայ խըրճիթները կառուցված էին անտաշ փայտերից, և նորանց շուրջը սիմինտրի (եգիպտացորեան, բուղդայ,) արտեր էին, որոնց ետևումը սևանում էր անտառը։ Այդ գիւղի միջումը կար մեկ բաւական բարձրացած շինութիւն, որ շինուած էր աւելի ամուր և գեղեցիկ միւս խրճիթներից։ Նադոին հասկացրեց Ավգուստինին թէ այ՛դ է խորհրդի պալատը։ Ուղեցոյցը գնաց ուղղակի դէպի այդ շինութիւնը, իսկ Ավգուստինը հետաքրքրութենով նայում էր նորա շուրջը, որովհետև առաջին անգամն էր նորա պատահելը Հնդկացւոց բնակութեանը։ Խրճիթների առաջին կանգնած էին կանայք և երեխայք, որոնք մեծ զարմանքով նայում էին եկողների վերայ։ Կարմրակաշիների դէմքերի վերայ չէր երևում.

չարակամութիւն դէպի սպիտակադէմքերը,
և շուտով հաղորդակցութիւն ունեցան
այդ գեղեցիկ տղամարդների հետ, որոնց
և կամեցան մօտենալ քաջամարտիկ երի-
տասարդները։

Ամեն զինուորները խորհուրդ էին տես-
նում, և սպասում էին այդ հիւրերին,
որոնք մտնելով խրճթի մէջ, տեսան բնա-
կիչների գլխաւորներին, որոնք նստած էին
պայծառ կրակի շուրջը։ Ամենքը լռեցին.
իսկ նրանցից մէկը տեղ ցոյց տուեց այդ
բարեկամներին կրակի մօտ։ Ավգուստինը և
Նազարին լուռումունջ նստեցան, և սպա-
սում էին Գլխաւորին, թէ ինչ պէտք է
ասէ նա, որովհետև նրանից առաջ ո՛չ
ոք չէր համարձակվիլ խօսելու։ Նազարին
լա՛ւ էր իմանում Գեղավարների սովորու-
թիւնները, իւր ընկերին էլ առաջուց
յայտնել էր։ Երկար նստեցան զինուոր-
ները, և լուռ նայում էին փայլուն աչքե-
րով այդ տղամարդերի վերայ, որոնք համ-
բերութենով տանում էին այդ փորձու-



թեանը։ Վերջապէս Ունկասը (Գլխաւորը)
արտայայտեց պատուով։

— Գեղավարները ուրա՛խ են սպիտակա-
դէմ եղբարց գալստեան վերայ։ Ի՞նչ է
հարկաւոր նոր բարեկամներին, թող ասեն.
Գլխաւորի ականջները բաց են լսելու։

Ավգուստինը պատմեց, թէ այն պատճա-
ռով է եկել այս երկիրը, որ ստանայ ժա-
ռանգութիւն այդ երկրի մեծ մասին, և
ցոյց տուեց Գլխաւորին իւր թղթերը։

— Այդ իմ ժառանգութիւնս է, աւելաց-
րեց նա.— Սպիտակադէմքերի Գլխաւորը
տուել է ինձ այդ երկիրը, բայց չկամեցայ
տիրել նորան առանց հարցանելու Գեղա-
վարներից, թէ արդեօք կարո՞ղ եմ ունե-
նալ իրաւունք, և թոյլ տան նոքա ինձ
բնակվել իրանց մօտ։ Ահա ես սպասում
եմ իմաստուն Ունկասի պատասխանին։

Կարմրակաշին վեր առաւ թղթերը իւր
ձեռքը, և անթարթ աչքով նայեց, թէ և
չհասկացաւ նրանց միջի գրուածը։ Յետոյ
բարձրացնելով աչքերը դէպի այդ մասով

մարդու դեղեցիկ ու պարզ դէմքը՝ ասաց․

— Քո երկիրն է, որ դու կարող ես ստանալ նրան։ Ունկասը չէ արդելում, եղբայր եղբօր մօտ կարող է բնակվել։

Ավգուստինը հազիւ կարողացաւ զսպել իւր ուրախութեան աղաղակը։ Նա իմացաւ, որ վայրենաբարոնները կ՚յարգեն նրանց, որոնք կարողանում են ծածկել իրանց զգացմունքը, բաց՚ի սրանից այդ զինուորների առաջին բարերարութենովը համարվում էր գործի հաստատութիւնը։

— Դելավարները ճշմարտասէր են, ասաց նա բաւական սառն սրտով.— Ես ցանկանում եմ գտնել նորանց բարեկամութիւնը։ Կհրամայե՞ն արդեօք իմ եղբայրներս, որ առաջարկեմ նորանց ընծաներ։

Եւ չսպասելով այդ հարցի համար պատասխան ստանալուն՝ նա վեր առաւ իւր ճանապարհի պայուսակը (քսակը) և դուրս հանեց նրանից շատ փայլուն բայց հասարակ բաներ, որոնք թանկագին էին երևում միայն նորանց աչքում։ Գլխաւորը



ընտրեց իրա համար ամենալաւը, և մնացեալը բաժանեց զինւորներին, որոնք չկարողացան թագցնել իրանց զարմանքը, տեսնելով այդ կեղծու և զարդարած մարգարիտները։ Դելավարները մոռացան իրանց վսեմութիւնը, և չիմացան, թէ ինչպէս շնորհակալութիւն անեն այդ մատաղ օտարականից։ Մինչև անգամ Ունկասը ծիծաղելով ասաց․

— Սպիտակադէմ եղբայրը առատ է և խելօք։ Բաց ձեռքը կընդունվի յօժարութեամբ, մեր մէջ բարեկամութիւնը կ՚լինի անքակտելի։

Նա նշանով յայտնեց, իսկոյն բերին մեծ ծխաքարշը, որը պատրաստեց ինքն Ունկասը, ամենից առաջ ծխեց ինքն մի փոքր և տուեց Ավգուստինին։ Նա էլ ծխեց մի երկու անգամ և տուեց Նադւտիին, Նադւտին էլ ծխելով առաջարկեց իրա մօտ նստողին, և այդպիսի կերպով ամեն նստողները ծխեցին հաշտութեան ծխաքարշը ՚ի նշան բարեկամութեան։

— Իմ եղբայրը այստեղ համարեա թէ իրա տանն է, ասաց Ունկասը-և ամեն վրան (չատիր) պատրաստ է ընդունելու նրան իւր ընկերովը. ամեն տեղ նա կ'գտնէ եղբայտացրեան և վայրի կենդանիք կամ թռչունն։

Եմզուստինը մինչդեռ շնորհակալութեամբ կամենում էր թողնել արդէն այդ խորհրդի տունը, ուր կրակ վառած բարեկամութիւն հաստատեցին, աչա՛ յանկարծ երևեցաւ մէկ մատաղ զինուորի մթին շուաք։ Նաղտին խրտնեցաւ ճանաչելով Վենոնդին, որի հետ պատահեցաւ այն անբախտ պատահմունքը անտառի մէջ։ Մատաղ վայրենաբարոն նկատեց փայլուն աչքերով ամենքին և իւր աչքերը յետ չարութենով դցեց երկու ընկերների վերայ։

— Վենոնդա՛, իմ որդի, ասաց Ունկասը. -Այդ սպիտակադէմքերն մեր բարեկամներըն են։

— Վենոնդան բարեկամ չէ՛ լինիլ սպիտակադէմքերին, պատասխանեց Գլխաւորը



տխուր դէմքով,-նա կատէ նրանից և կլինի հալածող։

Այդ խօսքերը սաստիկ տպաւորութիւն արին ամենքի վերայ, որոնք ժողովված էին այնտեղ, բայց Ունկասը մնաց զարմացած և սաստիկ նայում էր իւր որդու վերայ։ սպիտակադէմքերը իմ եղբայրներն են, ասաց Ունկասը.-Այդպէս վճռեց զինուորների խորհուրդը, և Վենոնդան չի համարձակվիլ հակառակիլ հօրը։ Հաշտութեան ծխաքարշը ծխվէլ է մեր մէջ և դամահաւը (սուրը) դրված է իրա տեղը։

Ամենքը լռեցին։ Գլխաւորը վեր կացաւ և նշանով յայտնեց սպիտակներին, որ գնան իրա ետևից, և յետոյ դուրս եկաւ խորհրդի պալատից։ Վենոնդան մնաց արձանի պէս անշարժ, չհամարձակվելով մի բան ասել հօրը, բայց նորա աչքերը փայլում էին չկամութենով։ Նաղտին էլ իմացաւ, որ շատ պէտքէ համբերել այդ վրեժխնդիր վայրենաբարոյ անձին այնտեղ։

Արեգակը արդէն ամենևին ծածկվում

էր, գիշերն էլ մթնացնում անտառը և հովիտը։ Մատաղ Ավգուստինը և Նադտին լուռ գնացին կարմրակաշիի Գլխաւորի ետևից դէպի նորա խրճիթը, ուր պատրաստվեցաւ կերակուր և ըմպելի, իսկ անկողինները արջի կաշիից էին։ Այդ երկու ընկերները չկարողացան քնել սկզբում երբ որ պառկեցան և չկարողացին երկար խօսել գո՛նէ վերջին անցքի համար։

—Վենոնդի ատելութիւնը սպառնում է մեզ անբախտութիւն, ասաց Նադտին.- Մենք չենք համարձակիլ բնակվելու այստեղ, որքան կենդանի է նա, մինչև չանցկենայ նորա չարութիւնը։ Ես այսպէս եմ կարծում, որ նա շուտով կմեռնի, եթէ յետ չկանգնէ վրէժխնդրութենից։ Զուր տեղ չսպանեցի ես նրան անտառումը։

—Մարդասպանութիւնը մեզ չի կարող բախտաւորութեան հասցնել։ Երբ որ կ'տեսնէ նա, թէ մենք կամենում ենք հաստատապէս լինել նորան բարեկամ այն ժամանակ կ'ներէ մեր ակամայ սխալմուն-



քը։ Սէրը կ'մերժէ ատելութիւնը և ես կամենում եմ, որ նա ինձ սիրէր։

—Դու լա՛ւ չես ճանաչում վայրենաբարոներին, ո՛չ, Ավգուստի՛ն, տեսնուած չէ բնաւ, որ կարմրակաշին յետ կանգնի վրէժխնդրութենից։ Մենք պէտք է զգուշանանք Վենոնդից։ Նա չի՛ համարձակվիլ յայտնապէս հակառակվիլ իրա հօրը և ընդդիմաբանել ամեն զինուորներին, բայց միայն չէ՛ դադարելու մեզ ծածուկ հալածելուցը, և չի՛ հանգստանալու մինչև մեզ երկուսներիս չսպանէ։ Ահա՛ այս պատճառով վատ չէ մեզ կանուխ փախկլը նորա առաջ։

—Ես չեմ կամենում արիւն թափել, ասաց Ավգուստինը հաստատապէս է։

—Սակայն, մենք պարտաւոր ենք պահպանել մեր սեպհական կեանքը, այսպէս խրատում էր նրան Նադտին։

—Եթէ ամեն մի մարդ մտածէր միայն իւր պահպանութեան և ո՛չ տարածված ճշմարտութեան համար, աշխարհքը կ'մնար

տգիտութեան խաւարի մէջ։ Պէտք է սիրել թշնամիներին և ներել նորանց, պատճառ, նոքա գործում են մեզ այդ չարութիւնը տգիտութենից և անկրթութենից։ Սէրը մի ամենազօրաւոր զէնք է, որ և իցէ չարութիւն չի կարող կանգնել նորա դէմ։

Նադտին լուեց մի փոքր և մեկնեց ձեռքը դէպի իւր ընկերը։

—Դու բարի և ազնիւ ես, ասաց նա զգացմունքով։ —Ես օրհնեալ կլինիմ համոզված այդպիսի իմաստունի ձեռքով։ Ես էլ համարեա թէ վայրենաբարոներից մէկըն եմ։ Հապա թո՛ղ լինի, ինչ որ լինելու է, ես պէտք է հետևեմ քո խորհրդին։ Եթէ մենք կապաւինենք ուր և իցէ մէկ անկիւնում (քիւնջում), գո՛նեա խղճմտանքը կ՛լինի մաքուր։

Ավգուստինը սեղմեց Նադտի ձեռքը, ուրախանալով, որ իւր ընկերը համաձայնում է իւր դատողութեանը, և նոքա երկոքեան ննջեցին բաւական բախտաւորապէս, ինչպէս բարեգործութենից յետոյ։



ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.

## Վենոնդան.

Ավգուստինը հաստատապէս հաւատաց բարութեան և սիրոյ կարողութեանը, բայց և գիտէր, որ հեշտութենով չէ կարող կործանել այդ մատաղ վայրենաբարոյի սըրտի մէջ եղած ատելութիւնը և թշնամութիւնը, ուստի աւելի հաստատ ուխտ դրաւ իւր անձնի մէջ յաղթելու նորան սիրով։ Նա սկսեց համոզել Վենոնդին, խօսեց նորա հետ քաղցրութեամբ, առաջարկեց նորան իւր ծառայութիւնը, սակայն կարմրակաշին արժանի չէր համարում՝ անգամ պատասխանելը, այլ չարութեամբ ժըպտում էր։ Ավգուստինը առաջարկեց նրան այնպիսի ընծաներ, որոնք ցանկալի էին Հնդկացւոց, բայց Վենոնդան ամենևին

ուշադրութիւն չէր դարձնում նրանց վե-
րայ, այլ դէն էր գցում դէպի մի կողմն։
Երբ որ այդ մատաղ Եւրոպացին դառ-
նում էր որսից, և առաջարկում էր գեղե-
ցիկ պատառը իւր Թշնամի Վենոնդին,
նա գցում էր այն եւ շների առաջ։

Այդ ամենը լինում էր անարգաբար,
բայց Եվգուստինը համբերութեամբ տա-
նում էր, սպասելով, թէ նորա սիրտը կա-
րելի է մի ժամանակ կակղանայ։ Այդ Գե-
ղավարների գիւղի մէջ ինքն և Նադոտին
աներկիւղ էին իբրև Գլխաւորի հիւրեր,
և ո՛չ ոք չէր համարձակվիլ նեղացնել
նրանց, իսկ անտառումը կարող էին պա-
տահել փորձանքի։ Այդ Եւրոպացիների
ամեն զգուշութիւնը նշանակութիւն չու-
նէր վայրենաբարոյի խորամանկութեան
առաջ։ Վենոնդի անհաշտ ատելութիւնը
վշտացնում էր Եվգուստինին, բայց միև-
նոյն ժամանակ նրան մխիթարում էր Վե-
նոնդի տասն և չորս տարեկան քոյր՝ Նա-
ղելի Փայխտայի սէրը և բարեկամութիւնը։



Ինձ առաջին օրերից սկսած այդ աղջիկը
յայտնեց մատաղ օտարականին առանձին
զգացմունք, և զարմանքով լսում էր նո-
րան, երբ որ խօսում էր անյիշաչարու-
թեան, հեզութեան և վեհանձնութեան վե-
րայ։ Վենոնդան ՚խղճու՛ր էր աշխատում
զարթեցնել և իրա քրոջ սրտի մէջ ատե-
լութիւն դէպի սպիտակադէմքերը։ Այդ-
պիսի դէպքերում գեղեցկուհի Փայխտան
պատասխանում էր եղբօրը թէ ինչո՞ւ հա-
մար պէտք է ատել մեր հիւրերին. նոքա
բարի են և քաղցր, և սովորացնում են
ինձ լաւ բաներ։

— Սպիտակադէմքերը խորամանկ են ինչ-
պէս օձ, ասաց վայրենաբարոն.-նորանք
եկել են ծովի այն կողմից, որ առնեն մեր
ձեռքից մեր երկիրը, որսան մեր անտա-
ռումը։ Վենոնդան երդուել է վրէժխնդիր
լինելու օտարականներին, նա քաջ
զինուոր է, նորա ձեռքը չի դողալ շանը
սպանելիս։

Վախկոտ աղջիկը գնաց շուտով Եվ-

գուստինի մօտ, որ զգուշացնէ նորան, իւր եղբօր անչափ չարութեան մասին։ Սակայն Ավգուստինը միամտացնում էր, ասելով։

— Քո եղբայրը չէ ճանաչում ինձ, երբ որ նա կ'սովորի կարդալ ինչպէս ես կամենում եմ; այն ժամանակ կ'սիրէ նա ինձ։

Բայց Վ. Ենոնդի առողջութիւնը օրըստ օրէ շատանում էր, օրերը անցնում էին, և մանաւանդ դժուար էր մնալ այն կողմում որովհետև այդպիսի թշնամու հետ երկիւղալի էր ապրել ամէն մի վայրկեան։ Դա հենց վշտացնում էր Ավգուստինին և զայրացնում Դաղավին. բայց ի՞նչ պէտք էր արած, երկուսն էլ շարունակեցին մնալ Գեղավարների մօտ։

Մի անգամ, Վ. Ենոնդան մի քանի օր չերևեցաւ. Ավգուստինը հարցրեց Փայիտայից.-Ո՞րտեղ է եղբայրդ, Փայիտան էլ պատասխանեց, թէ եղբայրս գնացել է որս, և կմնայ այնտեղ դեռ երկար ժամանակ, որ ձեռք բերէ ձմեռվան մսի պաշար։

— Ուրեմն ես էլ կերթամ, ասաց Ավ-



գուստինը, ես կընդաղմարում եմ Ձեզ մօտ և ամէն բան պատրաստ եմ տեսնում, ուստի պէտք է գնամ վայրի կենդանիք որսալու ձեզ համար։ Այսօր ես ման կ'գամ անտառի մէկ մասը, և կ'բերեմ ինչպէսի և իցէ վայրի կենդանի։

Աղջիկը վախեցաւ Ավգուստինի այդ դիտաւորութեան մասին և սկսաւ համոզել նորան մնալու գիւղի մէջ մինչև իւր եղբօր գալը անտառից։

— Վ. Ենոնդան լա՛ւ որսորդ է, ասաց դեղեցկուհի Փայիտան շփոթված կերպով, նա կ'սպանէ նետով բաւական վայրենիք։ Սպիտակ եղբայրը չպէտք է թողնէ ինձ, բարի Ավգուստինը կպատմէ ինձ իւր հայրենիքի մասին։

— Ես երեկոյեան կ'պատմեմ քեզ, երբ յետ կ'դառնամ որսից։ Ես էլ նմանապէս որսորդ եմ, չեմ կամենում նստել տանը ինչպէս կին, երբ զինուորները վազում են եղջերուների և արջերի ետևից։

— Փայիտան խնդրում է սպիտակ եղբօրը

չգնալ անտառը, այնտեղ երկիւղալի է։

—Առաջին անգամն չէ, որ ես գնում եմ որս, ասաց Ավգուստինը ժպտելով.—ես մի անգամ չեմ պատահել փորձանքի։ Ուստի ես քեզ ասացի, թէ ով կատարում է իւր պարտքը, նա ամենևին չէ վախենալ։

—Ինչ և իցէ, իմ եղբայր, չ'պէտք է գնաս անտառը, խրատում էր այսպէս աղջիկը.—եթէ քեզ պատահին շատ վայրենի կենդանիք և դու շատ որսաս նրանցից, Գեղավարները կ'բարկանան և կ'նախանձուին։

Ավգուստինը կարելի էր որ համոզվէր աղջկայ աղաչանքով, որ յիրաւի պատճառ ունէր արգելելու նրան անտառը գնալ, բայց այդ րոպէում մօտեցաւ նրանց Ունկասը (փայիտայի հայրը) և իմացաւ թէ ինչու համար են խօսում, ասաց.

—Գեղավարները չ'են նախանձիլ լաւորսորդներին, այլ կ'յարգեն նորանց։ Սպիտակ բարեկամի հաւատարիմ աչքերը, ամուր ձեռքը, հրային զէնքը և նորա օգ-



նութիւնը մեզ օգտաւէտ են։ Նա լաւ կանէ, եթէ գնայ որս։

Փայիտան էլ չհամարձակվեցաւ համոզելու Ավգուստինին, բայց հանդարտ կերպով շշնջեց նորան այս խօսքերը.—

—Զգուշացի՛ր, Ավգուստին, անտառումը թափառում է չար Գայլը (վենոնդան)։

Արդէն նա հասկացաւ թէ ինչու համար էր այդքան համոզում իրան այդ աղջիկը։ Վենոնդին շատերը Գայլ էին կոչում, որ եթէ պատահէր նրան, կարելի էր որ մի վնաս հասցնէր Ավգուստինին, որովհետև անհաշտ թշնամու պէս միշտ ատում էր նորան։ Ավգուստինը վեր առաւ իրա հետ Նաղտին, և խոստացաւ յետ դառնալ որսով։ Փայիտան ճանապարհ գցեց նորան թառաչ քաշելով. բայց Ավգուստինը միամտացնում էր նրան հաւատացնելով, որ չի պատահիլ իրան ոչինչ ձախորդութիւն։

Որսը բաւական յաջողակ եղաւ։ Անտառումն ճայթում էին (դրաքում էին) այդ

երկու ընկերների հրացանների ձայները։ Նադոյին փախցնում էր եղջերուին, երբեմն էլ ձայնում էր Եվգուստինին, բայց չէր լսում, որովհետև նրա շատ տարածութեամբ հեռացել էին միմեանցից։ Եվգուստինն էլ նոյնպէս չէր լսում ոչինչ։ Անտառումը թագաւորում էր լռութիւնը, միայն ծառերի գլուխներն էին փոքր ինչ ձայն հանում և գետն էր կարկաչում իւր հոսանքովը։ Վերջապէս հեռի լսուեցաւ հրացանի թոյլ ձայն. Եվգուստինն այդ ուղղութենով գնաց, երբեմն ձայն տալով, բայց պատասխան չէր լսում։ Կարելի է Նադոյին գնացել է դէպի գիւղը, այսպէս մտածեց Եվգուստինը, և նայելով դէպի արեգակը՝ լցրեց իւր հրացանը և ճանապարհ ընկաւ դէպի գիւղը։ Նա դուրս եկաւ անտառումը մէկ հրապարակի մէջ. նորա մէջ տեղ բարձրացած էր մի մեծադիր ծառ, որը շրջապատած էր թանձր թփերով։ Այդ վիթխարի (մեծ) ծառի արմատն այնքան հաստ էր, որ հինգ



մարդ չէին կարող շրջապատել։ Եվգուստինը ականջ դուարձնում էր այդ անտառի թագաւորի մեծութեան վերայ. որի ճիւղերի մէջ կարող էր թագնուիլ պանտերայ (*) և այն տեղից թռչել իւր զոհի վերայ։

Յած ճիւղերի մէջ լսուեցաւ շաչիւն (շրխշրխկոց), Եվգուստինը զննեց տնտղեց ծառի ճիւղերը կասկածելով, և գուշակում էր թէ մի ինչպիսի և իցէ երկիւղ-այնտեղ սպառնում է իրան, ուստի ըռնեց հրացանը ձեռքին պատրաստ։ Նա նկատեց կանաչի միջից սև աչքեր և սեսաւ թփերի մէջ մէկ շարժումն, որ և ընկաւ գետնի վերայ։ Ձենց այդ վայրկենումը սուլելով սատրիկ անցաւ իրանից ները, և կարծիք չկար, թէ կ՚ցցուէր Եվգուստինի կուրծքի մէջ, եթէ նա չնախագուշանար. յետոյ այն մարդը թռաւ մօտ ծառ քամակում թագնուեցաւ։

---

(*) Ցալանկի ազգից, պատառող կենդանի է, որ լինում է աշխարհի տաք կողմերում. ծան. Թարգ.

— Դա չար Գայլն է, ասաց Եվգուստինը, նա կամենում էր սպանել ինձ: Նրան շփոթեց Վենոնդի այդ նոր չարագործութիւնը, և կասկածելով թէ կրկին կ՚ձգէ նետը իրա վերայ, ուստի պատրաստեց հրացանը և անթարթ աչքով նայում էր դէպի այն հոյակապ կաղնին, որ տեղից թռաւ նետը: Այնտեղ թփերի մէջ մի թեթև շարժմունք եղաւ, նոյնպէս էլ կաղնիի բարձր ճիւղերի մէջ և նշմարվեցաւ մէկ մեծ դեղնագոյն բան, և երևեցաւ յանկարծ պանտերայի մեծագլխը և ահագին գլուխը, որ նայում էր դէպի ցած վիրաւի դէպի Վենոնդան-դէպի իւր վերայ նետ ձգողը, որ և ցածից չէր տեսնում թէ պատրաստ գազանը իրա համար պատրաստված է յարձակվելու, բայց նա աշխատում էր կրկին արձակել նետը Եվգուստինի վերայ:

Եվգուստինը կարող էր նախատես լինել թէ ինչ է լինելու մի րոպէի միջում, այսինքն պանտերան պիտի պատառէր Վե-



նոնդին և այնուհետև ինքն կարող էր հանգիստ ապրել, և կարող էր խորհուրդ տեսնել իւր ընտանեաց այնտեղ բնակեցնելու մասին, սակայն, ազնիւ երիտասարդը երկար չշփոթվեցաւ: Նա մտածեց առաքինի մարդու պարտքը այսինքն ներելը իւր թշնամեաց, և մտադիր եղաւ ազատելու Գայլ-Վենոնդին պանտերայի ճանկից: Զարհուրելի գազանը արդէն պատրաստվել էր թռչելու իւր զոհի վերայ, և նորա աչքերը լցուել էին արիւնով, իսկոյն թնդաց հրացանի ձայնը: Պանտերան սկսաւ բառանչել, որ և ծառից ընկաւ Վենոնդի ոտերի տակ, որին 'ի հարկէ մեծ զարմանք պիտի պատաած լինէր: Եվգուստինի գնդակը ուղղակի անցել էր գազանի աչքի միջից, որը ընկել էր ջարդված գլխով:

Արտախանալով կարմրակաշիի անշարժ մարմինը Եվգուստինը մօտեցաւ կաղնի ծառին, շարժեց թուփերը, և կեռացաւ պանտերայի վերայ որ ստոյգը իմանայ արդեօք կենդանի՛ է դեռ, թէ ո՛չ: Երբ բարձրաց-

րեց Ավգուստինը իւր գլուխը, տեսաւ, որ Վենոնդան այնպէս էր աներեւութացել աննկատելի կերպով, մինչեւ անգամ հետքըն էլ չէր երեւում: Ի զո՛ւր Ավգուստինը ուշադրութեամբ սկսեց ականջ դնել, որովհետեւ այդ վայրենաբարոն այնպիսի արագութեամբ էր հեռացել, որ անկարելի էր գուշակել իմանալ թէ դէպի որ կողմն է աներեւութացել:

— Ինչո՞ւ փախաւ նա ինձանից, մտածեց Ավգուստինը ինքն իրան: Նա հասկացա՞ւ արդեօք, որ ես փրկեցի նրան մահից: Ա՜խ ցանկանում էի ես իմանալ, թէ ինչ է զգացել այդ վայրենաբարոն: Ա՛րդեօք գութը շարժեցա՞ւ նորա սրտումը, թէ տակաւին մնացել է իւր առաջվայ չարութեան եւ կատաղեալ վրէժխնդրութեան մէջ:

Նա թէպէտ չկարողացաւ դնել պատասխան այդ հարցին, սակայն, ուրախ էր եւ բաւական, որ բարի գործ էր գործել, եւ գոհացաւ իւր վիճակից, որ նրան յաջողեցաւ փրկել իւր թշնամուն մահից:



Ավգուստինը մինչեւ կանգնել էր այսպիսի մտածմունքով պանտերայի առաջ, յանկարծ լսեց ոտի ձայն. Նադտին էր, որ մօտեցաւ իրան շփոթված եւ վախեցած (նեղացած): Նա էլ նոյնպէս որոնելիս է լինում անտառումը իւր ընկերին, որին ահա գտաւ նորա հրացանի ձայնովը: Նադտին տեսնելով պանտերային, գլուխը ջարդ-ու փշուր եղած, հարցրեց իրա ընկերին, նա էլ պատմեց նրան միայն թէ ինչպէս է յաջողութենով սպանել գազանին, իսկ Վենոնդի համար դեռ ոչինչ չասաց, պատճառ, չէր կամենում պարծենալ իւր բարի գործովը:

Ուրախութեամբ տուն գնացին այդ երկու ընկերները, սիրուհի Փայլտան էլ դուրս եկաւ նորանց առաջ ուրախութեամբ: Պանտերային տարան Գեներավարների դուռը, եւ Ավգուստինին կոչեցին մեծ որսորդ, յայտնելով ընկեր ընկերի նորա քաջութեան գործը: Ավգուստինին խնդրում էին, որ պատմէ թէ ինչպէս է սպանել այդ

գարհուրելի գաղանին, նա մի քանի անգամ սկսաւ պատմել, բայց չէր յիշում ոչինչ Ջ_ենոնդի համար, որ դեռ ևս անտառումն էր մնացել և չէր դարձել գիւղը։





ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՐՈՐԴ.

## Ջ_երմախտութիւն.

Աւելի էր մտածել թէ Էվգուստինի փրկողութենից յետոյ, որ փրկել էր Ջ_ենոնդի կեանքը, խիղճն այդ փայրենաբարոն կդատարի սպիտակադէմքերին ատելուցը, կդատարի նորանց դէմ չարութիւն գործելուցը և գոնեա շնորհակալութիւն կմատուցանէ իւր փրկողին, սակայն և ոչ մէկը եղաւ սրանցից։ Երբ որ Ջ_ենոնդան մի քանի օրից յետոյ երևեցաւ գիւղումը, նորա դէմքը առաջվայ պէս դեռ տխրագին և բարկացած էր. նա մերժում էր Էվգուստինին, և չէր պատասխանում նորա հարցին, և անգամ չէր յիշում այն բանի համար, որ պատահել էր անտառումը։ Այդպիսի անհեթեթ կոպիտ վարմունքը

սաստիկ վշտացնումէին Եվգուստինին, որ և մտածում էր թէ գնալը իւր սիրելի մօր և մատաղ քոյրերի ետևից նրանց տեղափոխելու համար դեռ շատ կուշանայ, որովհետև անկարելի էր տեղափոխել այն երկիր, ուր չար թշնամին կարող է սպառնալ նրանց ամեն մի վայրկեան:

— Եթէ նա չշարժեցաւ դրանով, ասում էր Եվգուստինը, որ փրկել եմ իրան մեկ վայրկենական մահից, էլ ի՞նչ կարող է կակղացնել նորա քարացած սիրտը: Նա համարձակվել է իրա հօր հիւրերին սպանելու դիտաւորութիւն ունենալ, որ ոչ ոք Գեներալների ցեղից չէր համարձակիլ գործել այդ, որովհետև նոքա սուրբ են համարում հիւրընկալութեան աւանդութիւնը:

Եվգուստինը մտադիր եղաւ համբերութեամբ տանելու այդ նեղութիւնը և աշխատեց աւելի բարեկամանալ ծեր Գլխաւորի այսինքն Անկասի և ուրիշ զինուոր-



ների հետ: Ամեն Գեներալները սիրում էին ազնւական բարեկամներին նրանց ժրութեան մասին որսորդութիւնը, բարի խորհուրդների և բարեբարութեան համար:

Այդ ժամանակումը մի այնպիսի դէպուածք պատահեցաւ, որը համարեա թէ եղաւ Հնդկացւոց համար Եվգուստինից յաւիտենական գոհութեան պատճառ, այնէ գիւղի մէջ տարածվեցաւ վնասակար տենդ, որ և առաջուց նրանցից շատերին զրկել էր կեանքից: Անկասը հիւանդացաւ, որ նոյա Գլխաւորն էր, և թշուառուհի Ցայխտան լաց էր լինում նորա համար, որովհետև կարծում էր, թէ նորա հիւանդութիւնը անբժշկելի է: Զուր տեղ կանչվեցան կախարդներ, հիւանդին հմայելու համար, որ պառկած էր արջի մորթի մէջ, նորա տաքութիւնը չէր դադարում, և Գեներալները տխուր սպասում էին իրանց սիրելի Գլխաւորի վախճանելուն:

Եվգուստինը դառնալով որսից, տեսաւ նորա ամեն ազգականներին յուսահատու-

տութեան մէջ, նոյնպէս և խեղճ Գայիտային, որ դուրս եկաւ Ավգուստինի առաջ արտասուք թափելով:

— Ի՞նչ պատահեցաւ քեզ, քոյրիկ, հարցրեց Ավգուստինը, չիմանալով ոչինչ Ունկասի հիւանդութեան համար.-Ինչո՞ւ են լաց լինում այդ գեղեցիկ աչքերդ:

— Հայրս սաստիկ հիւանդ է, չար հոգին չէ կամենում թոյլ տալ նորան, նա մեռնում է:

— Տա՛ր ինձ նորա մօտ, ասաց Ավգուստինը.-չար հոգին կարելի է յաղթվի բարիից:

Աղջիկը նայում էր դէպի նա երկիւղով և յուսով, որ և հարցրեց:

— Սպիտա՛կ եղբայր, կարո՞ղ ես բժշկել նորան:

— Այո՛, ես սովորել եմ և այդ, պատասխանեց Ավգուստինը, ուրախանալով, որ կարող էր արդէն ծառայութիւն ցոյց տալ Վենոնդի հօրը:

Գայիտան տարաւ նորան հիւանդի մահճի



մօտ: Ունկասը խիստ տաքութեան ցնորքի մէջ էր, և չէր ճանաչում նորան: Ավգուստինը տեսաւ, որ թէպէտ սաստիկ է, բայց վնասակար չէ այդ տենդը, որ կարելի է բժշկել յայտնի բժշկական հնարներով:

— Միամի՛տ կաց, քո՛յրիկ, ասաց նա աղջկանը.-երեք օրից յետոյ քո հայրը կառողջանայ:

Նա գնաց անտառը, ժողովեց այն կանաչներից և արմատներից, որոնք ճանաչում էր, բերաւ դեղ պատրաստեց և տուաւ հիւանդին խմելու, ինքն էլ մնաց նորա մօտ:

Մի քիչ ժամանակից յետոյ հիւանդը սկսաւ աչքաբաց լինել: Նա քնում էր հանդարտ, և երբ զարթնում էր, նորա աչքերը մաքուր էին լինում. օր ըստ օրէ տաքութիւնն էլ պակասում էր: Ավգուստինը տուեց նորան նոր դեղ ևս, որ հիւանդութեան առաջը փակէ, և ինչպէս խոստացաւ աղջկանը, այնպէս էլ եղաւ: Գև-

ընկերների Գլխաւորը երեք օրվայ միջում առողջացաւ. ինքն էլ հենց զարմացաւ այդ մասին, որ փրկվեցաւ մահից։

Այդ բժշկութիւնը փառաւորեց Եվգուստինին։ Ամենքն հրաշք էին կարծում այս, ամեն զինուորները առանձին յարգանք էին ցոյց տալիս մատաղ բժշկին. միայն Պենոնդան չէր գոհանում այդ սպիտակադէմ մարդից իրա հօր բժշկելու համար, և շարունակում էր դեռ թշնամաբար նայելու Եվգուստինի վերայ։

Յանկարծ մի օր Պենոնդան ինքն էլ ընկաւ սաստիկ տենդի մէջ։ Նորա աչքերը փայլեցան. ցրտութիւնը արագութեամբ անցաւ նորա երակների (դամար) միջով, զօրութենից ընկաւ թուլացաւ, և 'ի զուր նա կամենում էր մերժել ցաւը իրանից, նորա գլուխը պտոյտ տուեց, ծնկները ծալվեցան իրա տակ և ինքն ընկաւ որպէս անզգայ։ Սարսափելով Ունկասը թռաւ դէպի Եվգուստինը արտասուալից աչքերով, և խնդրեց նրան փրկելու իւր որ-



դուն, նա էլ շուտով հասաւ հիւանդի մահճի մօտ։ Բայց Նադտին ասում էր.- Ես զարմանում եմ քո վեհանձնութեանդ վերայ, մի՞թէ դու տակաւին հաւատում ես այդ վայրենաբարոյի ողջալուն, թո՛ղ նա մեռնի, շատ հարկաւո՞ր է քեզ բժշկել նորան։ Եթ' նա չի մեռնիլ, որովհետև երկաթի առողջութիւն ունի (այսինքն շատ պնդակազմ է)։

Եվգուստինը միայն սեղմեց նորա ուսը, պատճառ, չէր կամենում հակառակել իւր ընկերին և ապացուցանել նորան, թէ հիւանդութեան մէջ չէր կարող նա չ'մոռանալ իւր թշնամուն, որ չարչարանքի մէջ էր, որին պարտաւոր է օգնել մարդասիրութեան պարտաւորութեամբ։ Նադտին սկսեց նեղանալ և յիմար անուանել իւր ընկերին նորա վեհանձնութեան և ինքնուրացութեան համար։ Ուշադրութիւն չդարձնելով դորա վերայ՝ Եվգուստինը գնաց հոգալ հիւանդի համար երկու հարազատ եղբօր, շինեց նորա համար դեղ,

հովացրեց նորա տաքացած գլուխը սառն ջրով, և տաքացրեց սառած ձեռքերը:

Վենոնդան սկսաւ առողջանալ, բայց ո՛չ մի բանով, ո՛չ մի հայեացքով չէր արտայայտում իւր շնորհակալութիւնը մատաղ բժշկի հոգացողութեան փոխարէն: Նա շատ անգամ իւր կեանքը անցուցանում էր անտառումը, որ չպատահէ չտեսնէ Ավգուստինին: Նադուին սաստկապէս յանդիմանում էր այդ անդոհունակ վայրենաբարոյ անձին, բայց Ավգուստինը պատասխանում էր հեզութեամբ:

— Մի՛ դատիր ուրիշներին, որ և քեզ չդատեն: Ինձ համար ցաւ է այն, որ Վենոնդան մնում է անհասկացող, բայց ես բաւական եմ դրանով, որ կարողանում եմ անել նրան բարերարութիւն:

Մի քանի Հնդկացիք էլ հիւանդացան, Ավգուստինը բժշկեց և նրանց, այս մասին փառաւորում էին նրան ամէնքը և համարում էին մեծ բժիշկ և բարեհոգի մարդ, նորա համբաւը տարածվեցաւ



կարմրակաշիների մինչև անգամ ուրիշ գիւղերն էլ:

Մի անգամ Պեկոտիների ցեղից (սորա ևս վայրենաբարոյների ազգից են), մարդիկ եկան և խնդրեցին, որ մեծապատիւ սպիտակադէմ բժիշկը գնայ իրանց հետ և բժշկէ իրանց Գլխաւորի որդուն: Բայց Նադուին ասաց.

— Մի՛ գնար, խնդրում եմ, կարելի է քեզ կտանեն այնպէս հեռու, որ էլ չես կարող յետ դառնալ այն տեղից:

Բայց Ավգուստինը ականջ չ՛դնելով իսկոյն ճանապարհ ընկաւ Պեկոտիների հետ: Մի օրում նոքա եկան գիւղը և մատաղահաս բժիշկը իսկոյն մտեցաւ հիւանդին, որ պառկած էր նոյնպէս տաքութեան մէջ: Բժշկեց նրան և մի քանի ուրիշ հիւանդներին. այնտեղ ևս յաջողեցաւ Ավգուստինին: Վայրենաբարոններն էլ բերում էին նորա համար այդ պատճառով շատ ընծաներ զարդարած վայրենի գազանների կաշուից, և զարմանում էին, որ այդ սպիտակադէմ բժիշկը չէր

ընդունում ոչինչ, միայն խնդրում էր իրանց բարեկամութիւնը։ Պեկոտինների Գլխաւորը առաջարկեց նրան մնալու իրա մօտ, խոստանալով սիրել նորան իբրև իւր որդի. բայց Ակգուստինը պատմեց նորան թէ ունի ինքն հեռի տեղում Աղի ծովի այն կողմումը մայր և փոքրիկ քոյրեր, որոնք անհամբերութեամբ սպասում են իրա յետ դառնալուն և որոնց պարտաւոր է պահպանել և կառուցանել նորանց համար բնակարան։ Նա աւելացրեց և այն, թէ ունի կալուած Գեղավարների գիւղի մօտ, բայց միայն Վենոնքի առնելութիւնը նեղացնում է իրան վերադառնալու այնտեղ։

Պեկոտինները ուրախացան, որ այդ մեծ բժիշկը բնակվել է կամենում իրանց մօտ, և սպառնալով խոստացան սպանելու Վենոնքին, եթէ նա կամենայ որպիսի և իցէ չարագործութիւն անել սպիտակադէմքերին։

Երբ վերջացաւ հիւանդութիւնը այն



գիւղի մէջ, և Ակգուստինը կամենում էր կրկին յետ դառնալ Գեղավարների մօտ, խնդրեց Պեկոտինների Գլխաւորին, որ իրան ուղեցոյց տայ։ Նոյա Գլխաւորը ժողովեց այդ ցեղի ամեն զօրականներին իրա մօտ խորհուրդի, որ հրաժարական ողջոյն տան սպիտակադէմ բժշկին, և շնորհակալ լինին կրկին պատուով նորա բարերարութեան համար։ Վառեցին մեծ կրակ, նըստեցան նորա չորս կողմը, և նստացրին Ակգուստինին Գլխաւորի մօտ, հաշտութեան ծխաքարշը շրջան առեց և այս տեղ։ Յետոյ Գլխաւորը վեր կացաւ տեղից և ասաց.

— Սպիտակ եղբայրը զօրաւոր է ամեն կախարդներից։ Նա եկել է Աղի ծովի այն կողմից, և փրկեց մեր զօրականներից շատերին մահից։ Սպիտակադէմքերը խմաստուն և բարի են։ Պեկոտինները շնորհակալ են, և կ՚խոստանան ամենևին չկռուիլ սպիտակադէմքի հետ, ո՛չ էլ յարձակվել նորա իշխանութեան պատկանած կալուածի վերայ։ Մեր մէջ սուրը իրա տեղը դրուած

է յաւիտեան։ Երբ որ մեր սպիտակ եղբօրը հարկաւորվի մեր օգնութիւնը, Գեկոտիները ամեն ժամանակ պատրաստ են պահպանել նրան, մինչև անգամ մեռնել նորա համար։ Գիկոտիները կ՚պահպանեն իրանց խոստմունքը։ Նոցա լեզուն խորամանկ չէ, արտայայտում է այն, ինչ որ զգում են։ Մենք ամենքս էլ կսիրենք սպիտակադէմքին, և պատրաստ ենք այս ապացուցանել գործով։ Մեծ հոգին կ՚պատժէ մեզ, եթէ մենք երախտամոռ և անգոհանակ լինինք, և յոյս ունինք, որ սպիտակ եղբայրն էլ Գեկոտիներին չի մոռանայ։

Միւս զօրականներն էլ նոյնպէս արտայայտեցին իւրեանց զգացմունքը Էմգուստինին, Էմգուստինն էլ շարժվեցաւ նոցա քաղցրութեամբը, այս բոպէում ահա՛ յանկարծ վայրենաբարոնների միջից երևեցաւ մի սպիտակ դէմք, և զարմացած Էմգուստինը աղաղակեց։

— Նաղոտի՛, ի՞նչ է պատահել քեզ, դու



